

# ԱՌԻՆ

ԱՄԱՍԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԵՐՈՒՍԱՆԷՄԻ ՀԱՅ ՊԱՏԻՆՐԳՈՒԹԵԱՆ



ՓԱԿՈՒՄՆ ՅՈՐԵԼԻՆԱԿԱՆ ՏԱՐԻՈՅ

ԺԵ. ԴԱՐԱԴԱՐՁԻ ՆԱՀՏԱԿՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՅ ՎԱՐԻԱՆԱՆՅ ԶՐԱՎԱՐԱՅՆ ՄԵՐՈՅ

ՀԱԶԱՐ ԵՐԵՍՈՒՆ ԵՒ ՎԵՅ ՎԿԱՅԻՅՆ

ՆՈՐ ՇՐՋԱՆ-ԻԶ ՏԱՐԻ

1952

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

|  |                         |      |
|--|-------------------------|------|
| ԽՄԲԱԳՐԱԿԱՆ   |                         | երես |
| — Ապրիլ 24   |                         | 11   |
| ԿՐՕՆԱԿԱՆ   |                         |      |
| — Դասելու արարք.   | Ե.                      | 118  |
| ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ  |                         |      |
| — Վարդանի Սիրսը (3).   | ԵղիվԱՐԴ                 | 121  |
| ՀԻՆ ԵԶԵՐ   |                         |      |
| — Բան խրատական.  | Հրատ. Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ   | 123  |
| ՊԱՏՄԱԿԱՆ   |                         |      |
| — Եղիեկ պատմագիր Էւ Վարդանանց պատե-<br>րազմը (12).                       | ՊԱՐԳԵՒ ԳՐԴ. ՎՐԹԱՆԷՍԵԱՆ  | 124  |
| ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ  |                         |      |
| — Ասարդոնի հատուածակողմը.  | ԱՆՈՒՇԱԻԱՆ ԱԲԳ. ԶՂԶԱՆԵԱՆ | 129  |
| ՀԱՅՐԵՆԱԿԱՆ   |                         |      |
| — Նուէր՝ Տ. Եղիեկ Ս. Արք. Տէրտէրեանի (Եղիվարդ)<br>(Փոխան շնորհաւորանքի). | Ն. ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ         | 132  |
| ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐ  |                         |      |
| — Գանձասար.  | Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ         | 135  |
| Նօթ Էւ Նիւթ.   | ԽՄԲ.                    | 137  |
| Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԵՆ   |                         |      |
| — Հեռագիրներ.  |                         | 141  |
| — Եկեղեցական-Բեմականք.   |                         | 141  |
| — Պատշոնականք.   |                         | 143  |
| — Այս տարուան ուխտաւորութիւնը.   |                         | 144  |
| — Բրոն. Օր. Ս. Ներսէսեան.  |                         | 144  |
| — Եպիսկոպոսական պանակէի Էւ լանջախաչի նուիրատուութիւն.                    |                         | 144  |

ՍԻՈՆԻ Տարեկան բաժնեգիրն է՝ բոլոր երկիրներու համար՝ Անգլ. Շիլին 15

Redaction of the Armenian Monthly SION

Armenian Patriarchate,

P. O. B. 4001

Old City - Jerusalem

Via Amman (Jordan)



# —≡ Ս Ի Ո Ն ≡—

ԻԶ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

1952

≡ Մ Ա Յ Ի Ս ≡

ԹԻԻ 5

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

### Ա Պ Ր Ի Լ 24

Աղէտներ կան ազգերու կեանքին մէջ որ չեն կրնար մոռցուիլ, և անցնող տարիները փոխանակ մոռացութեան՝ աւելի դառն ու ճակատագրական կը դարձնեն զանոնք: Հրէշային ոճիւրը որուն զոհ եղանք ազգովին, իր նմանը չունի պատմութեան մէջ, թէ իր տեսակով և թէ իր ծաւալովը:

Ապրիլ դարերով լաւագոյն օրերու յոյսով, յանձնառու ըլլալ ամէն կարգի զոհողութեանց, կրժեւով գերութեան ժանգոտած շղթաները, մղել չտեսնուած սրտառուչ ու արիւնոտ գուպարներ ընդդէմ մարդկային ամէն կարգի գազանութեանց և վատութեան, ի խնդիր բարոյական և ֆիզիքական գոյութեան, գալ հասնիլ քսաներորդ դարու սեմին, և հոն քաղաքակրթութեան լոյսին և անոր սեմին վրայ անխնայ մորթուիլ, ի տես համայն աշխարհի, իրողութիւն մըն է որուն հետ կարելի չէ հաշտուիլ, առանց ատելու մարդկութիւնն ու քաղաքակրթութիւնը:

Մեր բիւրաւոր նահատակներու մարմինները մնացին անթաղ, հեռաւոր ու ամայի անապատներուն մէջ, կեր վայրի գազաններուն և զիշակեր թռչուններուն, ոչ երկնքի լոյսը և ոչ ալ արդարութեան ցօլը իշաւ անոնց ցրուած ոսկորներուն վրայ: Մեր դալար կոյսերն ու մատաղեւամ մանուկները ապշուպուեցան վատշուէր ու անարգ շահագործումներու ի հաշիւ, իսկ անոնք որ հաւար ու մէկ մահերէ վերջ հրաշքով կրցին ողջ մնալ, աստանդական նետուեցան զար ու մէկ մահերէ վերջ հրաշքով կրցին ողջ մնալ, աստանդական նետուեցան, օտար մշուշներուն ծոցը, շարունակելու համար իրենց քաւարանեան կեանքը, անցեալ վերջիշումներու սլաքներէն բզիկ բզիկ:

Սև գիշերը իշաւ մեր իղձերուն և երազներուն վրայ, ամայացաւ մեր երկիրը իր գաւազներէն, մեր երազներու բոցավառ խարոյկէն մնաց միայն ալօտ ու տրտում ճառագայթ մը արագածի ստորոտին՝ որուն տմոյն շողերը կը մնան միակ գերազոյն ապահովութիւնը մեր վաղուան երազին, և որ սակայն տակաւին անգոր են լուսաւորելու Մասիսի մոայլ ճակատը և անկէ անդին տիրող որբ և ամայի մթութիւնը: Տարիներ կ'անցնին և մենք ցաւով կը սպասենք դեռ թափուած արեան զինը եղող մեր մարդկային ամբողջական իրաւունքներու յաղթանակին: Իսկ Արաքսէն անդին որբ ու ամայի կը մնան մեր տունն ու տեղը, դա-



ըստ որի արիւններու և քրտինքի զինը եղող մեր սրբարանները և մեր ու մեր նախնեաց անառիկ ժառանգութիւնը կազմող հայրենիքը, աւեր ու խոյան, դիակի մը պէս ինկած զիշակներնեւ ոտքերուն կոխան։ Մոռացումը չէ, ան տարակոյս, որ պիտի ամօքէ մեր բեկուած ու կողոպտուած հողին, մոռացումը դաւաճանութիւնը ընդհակառակն, ոճիւրի հաւասար արարք մը պիտի ըլլար, այս անգամ մեր իսկ ձեռքովը զործադրուած։ Այդ մասին հոգեւորանշ զայրոյթով արտասանուած է անէծքին վճիռը, «այսքան չարիք թէ մոռանան մեր որդիք, թող ողջ աշխարհ կարդայ հայուն նախատինք»։

Տակաւին մենք մեր նիւթական ժառանգութեանը հետ պիտի կորսնցնէինք մեր հոգեկան գանձերը, որ ո՛չ ցեց և ո՛չ ուտիչ պիտի կրնային ոչնչացնել, բայց միայն անոնք՝ զաւակները այն ոճրածին ցեղին, որուն անունն ու նկարալիւրը մենք շատ լաւ գիտենք և յիշել իսկ չենք ուզեր այս էջերուն մէջ։ Վասնզի անոնք միայն պիտի կրնային չինայել մեր նախնեաց մտքի ու սրտի արդիւնքը եղող հազարաւոր ձեռագիրներուն, որոնց մէջ մարմնաւորուած էր հայ արուեստը, հայ մշակոյթը, հայ միտքը, հայ ոգին։ Անոնք՝ այդ ոճրածին հրէշները միայն պիտի չինայէին մեր ճարտարապետական կոթողներուն, մեր ժողովուրդի շինարարական մեծ հանճարին, որուն շնորհիւ քարերը լեզու և կեանք են ստացած, յուզելու և բարձրացնելու քրիստոնեայ հոգին դէպի վսեմն ու երկնայինը։ Պիտի ոչնչանային տակաւին ոչ միայն մեր ազգազրական գանձերը այլ նաև անոնց ծնունդ և կեանք տուող գերագոյն կարելիութիւնները, հողը, աւանդութիւնը իր երկրին մէջ միայն անոնց ծնունդ կարելի ընող սերունդն ու սերունդները։ Պիտի անճիտուէր մեր սքանչելի և անմահ փաղանգը մտաւորականներուն, որուն նմանը հարիւրամեակներ պէտք են կարենալ ունենալու համար։ Այնքան մեծ է ու ծանր մեր կորուստը, որ կարելի չէ մարդկային մտքին ու երեւակաւութեանը մէջ պարտկել և մանաւանդ անոր հետ հաշտուիլ։

Անշուշտ թէ առաջին անգամ չէր որ արիւնը կ'ողողէր մեր երկիրը։ Պատմութեան կատաղի ցուլը մեր դարաւոր կեանքի ընթացքին բազմաթիւ անգամներ անցած է մեր բզկտուած մարմին վրայէն։ Երկնէ երկին եւ երկիրը, մեր տիեզերածնութիւնն ու դիւցազնախօսութիւնը խորհրդանշող պատկերը չէ միայն, այլ նաև պատմութիւնը մեր տառապանքին, որուն արեան ծովուն մէջ պիտի կրէր իր ցաւը հայ բնաշխարհը խորհրդանշող եղէգնիկը։ Մեր բոլոր հին մատենագիրները, Շնորհալիէն մինչև Դաւրիթեցին, իրենց սարսուռն շրթները մօտեցուցած հայ տառապանքի կարմիր եղէգնիկի վերաւոր ծակերուն, դարբնով երգած են հայ հողի տխրանուշ մեղեդին, կեցած մտամուրը մեր հազարաւոր դիակներու առջև, տեսլահար մարգարէներու նման ալաղակելով, «տեսանեմք կենդանեալ դիակունս անձանց մերոց»։

Սակայն պատմելով մեր ցաւը և թուելով մեր կորուստները դեղ ու բաւլասան դրած չենք ըլլար տարուէ տարի աւելի լայնափեռեկ բացուող ու կոտտացող մեր վէրքին, երբ ապրուած սարսուռները պիտի մնան անկշիռ և հին սայթաքումները պիտի կրկնուին աւելի ծանր հետևանքներով։

Անշուշտ չի բացատրուիր այս բոլորը, կողոպտիչ պատմագիտութեամբ յայտարարելով թէ դարերու ընթացքին արեւմուտքին մեր յարած մնալը, փոխանակ բարի դրացութեան զործնամիտ քաղաքականութեան, կորստաբեր և



անհեռատես քաղաքական գիծ մը եղած է մեր պատմական կեանքին մէջ։ Թէ օտարը մեզ օգտագործած է միայն իր քաղաքական և տնտեսական շահերուն ի հաշիւ, և վճռական վայրկեանին լքած մեզ մեր տրտում ճակատադրին հետ։ Հետևաբար լաւագոյն պիտի ըլլար եթէ խոհեմ քաղաքականութեան հետեւած ըլլայինք և անօգուտ աղմուկով և դանդաղութեամբ չխնայեցինք մէկ կողմէն արտաքին աշխարհը և միւս կողմէն առիթներ չհայթայթէինք մեր շարժումներուն հակոյ գազանին, իր սրուած ճիրաններով զմեզ յօշոտելու համար։

Սակայն պէտք է մոռնալ թէ հայութեան արևմտահայեաց հակումները քաղաքական հակումներ ըլլալէ առաջ՝ քաղաքակրթական երևոյթներ են, այս վերջին պարագան մեր պատմութեան ամենէն ամուր խթանն է, որու դէմ դժուար է աքացել։

Հայաստանը վերջնականապէս արևմուտքին դարձաւ, երբ քրիստոնէացաւ։ Սասանեան հարստութեան յաղթանակով կենդանացաւ Պարսկական կրօնը և զօրացաւ ապագայ աշխարհակալ ձգտումներու երազը։ Զուլման և կորստեան վտանգի սպառնալիքին ներքեւ էին ամենէն աւելի հայերը, որոնց վրայ կ'իշխէր նախկին Պարթև Արշակունի թագաւորներու մէկ ճիւղը։ Հայոց համար ուրիշ նար չկար վրկուլթեան, եթէ ոչ ապաւինիլ քրիստոնէութեան։ Սիրոյ խնդիր չէր այս թեքումը, այլ սեպհական գոյութեան պահպանման պահանջը։ Այսկերպ կարելի է բացատրել հայոց դարձի պատմական խորհուրդը և հոս է Տրդատի և Լուսաւորչի, սրբազան ամուլին, արժէքն ու մեծութիւնը։ Կրօնն էր որ թեքեց մեր քաղաքականութեան սլաքը դէպի արևմուտք։ Ընդհակառակն հայ նախա-րարական դասը, կապուած արևելքին, առանձնաշնորհումներով, սովորութիւններով և հասարակական հիմքերով, տարուած չէր արևմուտքով։ Սակայն այն օրէն ի վեր երբ արևելքը իսլամացաւ, կորսնցուց իր պատմական ու քաղաքական հրապոյրն ու հռչակը, մեզի մասնաւորաբար վիճակուեցաւ գերութեան շղթան և խաչի ու տառապանքի բոլոր ձևերը։ Մեր ազատութեան ձգտումը և արդար պահանջը դարերով բախելով ձախողանքի, ոչ միայն չի թուլցաւ, այլ ստացաւ կրօնական հաւատքի մը ամրութիւնը։ Հայ դատը հայուն համար վերածուեցաւ անընկճելի հաւատքի մը, Լուսաւորչի կանթեղին, որուն միշտ յառած մնացին դարերով հարիւրաւոր հայ սերունդներու երազուն աչքերը։ Հայը չէ ուզած և չէ կրցած հրաժարիլ այդ կանթեղի լոյսէն, վտանգի սզգերը կը մեռնին ու կ'անհետանան երբ կը կորսնցնեն ազատութեան զգացումը և արդարութեան յաղթանակին յոյսը։

Անտառակոյտ արտաքին ակնկալութիւնները կը զրաւեն մեր պատմական ճակատադրի կշիռքին մէկ թաթը և արժէք ունին միայն այն պարագային՝ երբ համապատասխան ծանրութիւն կայ միւս սեպի մէջ։ Քաղաքական գործունէութեան երկու ուղեգիծ կայ, մէկը որ լուսաստղի նման հեռուէն կը քաշէ նայուածքները, և մարդիկ զլսիվայր, առանց նկատի ունենալու դժուարութիւնները և հեռաւորութիւնը, կը վազեն անոր, և միւսը զգոյշ և զգաստ ուղին, երբ լոյսը մարդուն ձեռքին մէջն է և մարդը իր քայլերը կը փոխէ համաձայն անոր լոյսին և շրջապատի իրերուն, յամրաքայլ բայց անվրէպ յառաջանալով դէպի իր նպատակը։ Հայ գործիչները մեր պատմութեան առաջին օրերէն սկսեալ հետեւեցան առաջին ուղեգիծին, առանց նկատի ունենալու այն բազմապիսի դժուար-



թուփիւններն ու որոգայթները որոնց կրնային հանդիպիլ : Եղան երջանիկ ազգեր, որոնք մեզի նման նոյն ճանապարհ ընտրելով, հասան իրենց նպատակին, սակայն մեզի համար այդ ուղեգիրը օրհասական եղաւ :

Մենք ոգիով և բարոյապէս յաղթանակած ենք միշտ, մեր պատմական դարաւոր ոգորումներու ընթացքին, երբ ազատութեան կոչը փոխանակ դուրսէ՛ գալու՝ ներսէն է զգացուած և ձևակերպուած : Գաղափարը նման է բոյսի և կը ծաղկի իր սեպհական հողի մէջ : Եթէ մեր ազատութեան ծառին սերմերը ներածոյ չի լինէին, այլ տեղական պայմաններու համաձայն հունտեր, զուցէ տարբեր ըլլար մեր ճակատագիրը : Արտաքին ակնկալութիւնները հիմնովին չի կշռադատած, շտապեցինք նետուիլ մրրկայոյզ ծովը, բացած առագաստները մեր թեթև նաւակին այնպիսի ժամանակ մը, երբ կ'ոռնային մեր շուրջ չարաշուք հոգմեր և փոթորիկներ, զարնուեցանք խարակներու, խորտակելով մեր նաւը :

Այժմ մինակ ենք մեր դիակներուն հետ, հեռու մեր հայրենի հողերէն, որուն մէկ փոքրիկ մասը միայն, տարուէ տարի աւելի կենդանացած, կը կազմէ միակ յոյսն ու երազը մեր աննուաճելի հայրենասիրութեան : Չենք կրնար հրաժարիլ անշուշտ մեր դարաւոր երազէն և առայժմ կորսուած իրաւունքներէն, սակայն պէտք է ի մտի ունենանք որ կեանքը դրուած և սերտուած օրէնքներու կանոնադիր մը չէ, այլ շատ անգամ քմահաճօրէն թաւալող հոսանք մը, որ ունի իր անակնկալ ալիքները : Վա՛յ մեզի եթէ յամառինք մեր սխալներուն մէջ և չփորձենք սանձել զուր ալիքները այս կամ այն վարդապետութեան, այս կամ այն տեսութեան երասանակով : Ընթանանք յամրաքայլ, առանց բռնազբօսելու մեր ուղին, լուրջ և անաղմուկ : Այդպէս կը պատշաճ չէ սգաւորին, կայ վսեմ լուծիւն մը որուն ազալակները կրնան լսուիլ ամենուրեք :

Ամէն տարի սփիւռքի բոլոր հայաշատ կեդրոններուն մէջ, հայ զաղթաշխարհը կը յուշածէ Ապրիլեան եղեռնը և արիւնոտ սրտով ու խղճմտանքով... կը տօնախմբէ մեր բիւրաւոր մեռելներուն կարմիր յիշատակը, որոնք իրենց գերեզմաններէն և մահուան դաշտերէն մեզի կը բերեն չի մեռնող գաղափարներու ոսկի երազը, սրբազան շուշփայլ մը պէս նետուած իրենց հոգիներուն : Եւ մեռելները չեն ապրիլ երբ երազը մեռնի, և ողջերը կը դադրին ապրելէ երբ մեռելները լռեն : Մեռելները սիրել կը նշանակէ սիրել անոնց առաքինութիւնները, անոնց իտէալները, վասնզի մեծ ու եղբրամահ նահատակները պատկերներն են գաղափարին :

Երբ կուիւր վերջանայ, ըսուած է, ռազմիկներուն առաջին հոգը կ'ըլլայ թաղել նախ իրենց մեռելները, յետոյ խնամել վիրաւորները, ապա կշռադատել թէ ի՞նչ է շահուած և ինչ կորսուած : Մենք դժբախտաբար շատ բան կորսնցուցինք, գրեթէ ամէն բան, բացի Հաւատքէն և Յոյսէն, որոնք չեն մեռնիր : Ոչ ոք կ'անգիտանայ թէ տարիներէ ի վեր ամէն հայ հատուած սփիւռքի մէջ իր ցեղին ուխտը իր հոգիին խորը և դրօշը իր ձեռքին մէջ, անհուն ճիգ կ'ընէ պահելու իր ազգութիւնը, շատ յաճախ բիրտ ազգեցութիւններու դէմ և հոսանքն ի վեր նաւարկելով :

Ի՞նչ պէտք էր ընել և չըրինք. աւելի ճիշդ ի՞նչ պէտք է ընենք որպէս զի արիւնի և մահուան մեծ արհաւիրքէն ճողոպրած ազգին բեկորները կարենան ապրիլ միշտ իբրեւ հայ, սփիւռքի մշուշներուն մէջ, հեռի իրենց հայրենի-



քէն։ Անշուշտ թէ շատ բան ըրինք, պահպանելով և մշակելով մեր լեզուն, մեր կրթական գործը, մեր գրականութիւնը, մեր աւանդութիւնը և մեր եկեղեցին։ Սակայն ինչ որ ամենէն աւելի պարտ էինք ընել, մեր ազգային սուգին մէջէն և մեր սիրելիներու դիակներու վրայէն իրարու պէտք է երկարէին մեր ձեռքերը, եղբայրական գերագոյն սիրոյն մէջ։ Եթէ յանուն սփիւռքի մնացորդացին մեր բոլոր գործօն կուսակցութիւնները կարենային զինադուլ կնքել իրարու հանդէպ, և բոլորովի ազգին գերագոյն պահանջներուն շուրջ, միասին խորհելու և գործելու համար ի սէր մեր դժբախտ ժողովուրդի արկածուած ապագային, այն ատեն ինչ հրաշքներ կրնային գործուիլ և ինչ սխրագործութիւններ արդիւնաւորուիլ։ Եթէ Ապրիլեան մեր նահատակները յանուն մեր ժողովուրդին և անոր գերագոյն իտէալներուն մեռան, որուն կը հաւատանք մենք ի սրտէ, ի՞նչպէս և ինչո՞ւ չուզենք և չի կարենանք ապրիլ մենք նոյն այդ իտէալներուն և ապագային համար։

Որքա՞ն ճիշդ է խօսքը մեր մեծ եկեղեցականին և ուսուցչապետին, եթէ կարենայինք մենք սիրել զիրար այն չափով, որչափով որ կը սիրենք մեր մեռելները, այն ատեն բոլորովին տարբեր պիտի ըլլար մեր գործն ու ճակատագիրը։ Մենք իրապէս սիրած կ'ըլլանք մեր մեռելները, երբ զիտնանք հաշտ ապրիլ ողջերուն հետ, այս է Ապրիլ 24ի գերագոյն պայտագամը մեծ սպանդէն ազատուողներու և մեր ապագային համար զայն սրբազրել ուզողներու համար։

Ի՞նչ պիտի ըսէր իր հաւատքին համար ողջամահ եզող եկեղեցականը, և ի՞նչ կրակէ բառերով պիտի ծանակէր զմեզ, կտոր կտոր դաշունահար եզող ըրկավարս քերթողը, եթէ պահ մը իրենց առիթ տրուէր տեսնելու մեր իրերամարտ կեցուածքը և մեր հոգիներու բաժանումը մեր և իրենց գերագոյն նպատակին դէմ։

2ի բաւեր Ապրիլ 24ը իբրև բարոյական յաղթանակ նկատել մեր զոյուածեան և թշնամիի ոճրային ծրագրին ձախողման, անհրաժեշտ է որ ինքզինքնուս հետ ըլլանք, միակամ և միախորհուրդ, առանց տարուելու օտար ու ժամանակաւոր հովերէն։ Երբ մեր նայուածքը մեր սեպհական ճրագին, անոր լոյսին տակ հիւսենք մեր ապագային թեզանը։



## ԿՐՕՆԱԿԱՆ

### ԴԱՏԵԼՈՒ ԱՐԱՐՔԸ

Մի՛ դատե՛ք զի մի՛ դատեցիք  
 Զի որով չափով չափե՛ք նովին չափեսցի ձեզ :

Աւետարանը լեցուն է գաղափարներով, բնական ու ընկերային, ուր իրական և անհրաժեշտ փոխադարձութիւն կայ մարդուն և զինքը շրջապատող իրերուն միջև : Ինչ որ կը ցանես զայն կը հնձես, կ'ըսէ առաքեալը, աշխարհ կոչուող այս մեծ դաշտին մէջ : Եւ յիրաւի ամէն մարդ իր դրածն ու տուածն է որ կը ստանայ, փոխարարեութեամբ մը և համեմատական չափով :

Նոյն է պարագան մարդկային յարաբերութեանց ընթացքին : Ամէն շնորհ իր փոխարէնը, ամէն արարք իր անդրադարձը և ամէն կանչ իր արձագանգը կը գտնէ, համաձայն տրուածի նկարագրին, չափին ու կերպին : Բնութեան և կեանքի այս փոխադարձութեան օրէնքը շատ աւելի է, քան ինչ որ մենք կրնանք ենթադրել : Ամէն ինչ մեզի կուգայ այն չափով որ չափով որ մեզմէ կը տրուի ու կ'աւանդուի : Կ'ուզես որ մարդիկ քեզ յարգեն, յարգալիք եղիք անոնց հանդէպ, կ'ուզես որ շուրջիններդ ժպտով դիմաւորեն քեզ, քաղցրութեամբ վարուէ անոնց հետ, կ'ուզես որ մարդիկ սէր ու վստահութիւն ունենան քու նկատմամբդ, զործէ այնպէս՝ որ կարենաս ուրիշներուն թելադրել նոյն այդ մտածումն ու գործը :

Մի՛ գտնէք կ'ըսէ աւետարանը, բայց միւս կողմէն երանի կուտայ բոլոր անոնց՝ որոնք արդարութեան ծարաւն ունին : Տեսակէտով մը կարելի է չի գտնել, վասն զի մտածելու անհրաժեշտութիւն մըն է ան, ըլլայ բարոյական ըլլայ մտաւոր տեսակէտէն առնուած, երբ նկատի ունենանք թէ ամէն մարդկային երևոյթ կամ արարք մեր մէջ յառաջ կը բերէ համապատասխան տպաւորութիւններ, զգացումներ, դրական կամ բացասական միտքեր : Սուտ մը, առաքինութիւն մը, վատութիւն մը, բարիք մը, մեզ կը շահագրգռեն և մեր միտքը բնականօրէն անոնց նկատմամբ իր տեսա-

կէտները կը շինէ ու վճիռներու և եզրակացութեանց կը յանգի :

Անտարակոյս Յիսուս այս բնական անհրաժեշտ իրաւունքը էէ որ կը զլանա մարդուն : Յետոյ մարդկային գործերն ու արարքները դատող օրէնքներ և անոնց հսկող մարմիններ կան, որոնք առաւել կամ նուազ ճշտութեամբ կը ջանան ընթացք տալ մարդոց լաւ կամ գէշ արարքներուն և զանոնք արժեւորել, համաձայն անոնց նկարագրին ու արտայայտութեան : Տակաւին կազմակերպուած ու գիտակից ընկերութիւն մը իր հանրային կարծիքը ունի, խօսքով, մամուլով ու գործով պայքար մղելու համար վատառողջ գաղափարներու և քանդիչ արարքներու դէմ : Հետեւաբար ինչո՞ւ Յիսուս փոխանակ ըսելու դատեցէք կ'ըսէ մի՛ գտնէք :

Յիսուսի պահանջքը կը վերաբերի մարդոց ներքին իրականութեան, անոնց Աստուծոյ հետ ունեցած կապին, իրենց ապագային, աւելի ճիշտ անոնց ներքին ազատութեան : Այն իրականութեան՝ որուն մեզմէ իւրաքանչիւրը իր հաշիւը պիտի տայ, այն գերագոյն դատաստանին՝ որ վեր է մարդկային օրէնքներէն :

Թէ և մարդկային պատմութեան մէջ օրէնքը առհասարակ ժխտումն է ազատութեան, սակայն բարձրագոյն չափանիշով առնուած անոնք լրացուցիչներ են իրարու : Իրականին մէջ բարձրագոյն օրէնքը ազատութիւնն է, և բարձրագոյն ազատութիւնը օրէնք : Օրէնքը հակառակ է ազատութեան երբ նկատի ունենանք զայն անհատական պարագաներուն, սակայն օրէնքը ազատութիւնն իսկ է, երբ ընդհանուր առումով նայինք անոր :

Ազամ և Եւան իբրեւ ազատ անհատներ կեցան եղեմական պարտեզին մէջ, բայց օրէնքը եկաւ և սահմանափակեց անոնց ազատութիւնը. « Ի ծառոյն գիտութեան բարւոյ և չարի՝ մի ուտիցէք » . եւ կեանքի կռիւը դարբերու ընթացքին ուրիշ բան է, բայց օրէնքի և ազատութեան միջև մղուող պայքարը : Անշուշտ պիտի գայ սպասուած օրը, երբ ազատութիւնը գերագոյն օրէնքը պիտի դառնայ կեանքին, երբ մարդիկ պիտի գիտնան կատարել իրենց գործն ու պարտականութիւնը ճշմարիտ ու



լաւիմաց ազատութեամբ, առանց պէտք ունենալու օրէնքին և անոր խտտապահանջ հրամայականներուն: Անտարակոյս երբ օրէնքը պարտադրանք է միայն, և կ'առնել իր արդիւնը, չի կրնար ազատութիւն նշել իր արդիւնը: Կազմին որ կ'աճի, իր արդիւնը և գեղեցկութիւնը, կը հպատակի ներքին օրէնքի մը, մարդը որ կը դաստիարակուի և կը յառաջդիմէ, նոյնպէս կը հպատակի առարկայ օրէնքներու, եթէ անոնք պահ մը զգային թէ օրէնքի խիստ ու ճշող հարկադրանքին ներքեւ են, գուցէ չի կրնալին ունենալ այն ազատութիւնը որ իրենց կատարելութեանը նպաստեց:

Օրէնքները անիմաստ և անօգուտ են երբ չեն նպաստեր մարդոց կատարելութեան և յառաջդիմութեան, երբ առիթ չեն դառնար մարդկային նկարագրի ազնուացման: Առանց այս բարիքին և բարի ազդեցութեան, օրէնքը ոչ միայն ազատութիւն չէ, այլ ընդհակառակն կատարեալ բռնակալութիւն մը և անիմաստ պարտադրանք միայն: Անտարակոյս այս ներքին իրականութեան և փոխյարաբերութեան է որ կ'ակնարկէ Յակոբոս առաքեալը իր թուղթին մէջ, երբ կը յայտարարէ թէ «այնպէս խօսեցարուք և այնպէս արարէք, որպէսզի ազատութեան օրինօքն իցէք դատելոց»: Ազատութեան օրէնքին համաձայն է հետեւաբար որ. Աւետարանը կը հաստատէ իր չափանիշերը և կը պահանջէ զանոնք հաւատացեալներէն: Յիսուս շատ լաւ գիտէր թէ արարքներն ու արարմունքները ոչինչ կրնան արժէք եթէ չեն նպաստեր մեր նկարագրին և օժանդակ չեն հանդիսանար մեր յառաջդիմութեան: Իրականութիւն է թէ միլիոն մը կայ ազատութեան մէջ որ գերիվեր է օրէնքով պարտադրուածէն, և ստոյգ է թէ մարդեր կան որոնք վեր են օրէնքէն, և որոնք միայն ուղիղն ու բարին կը գործեն, հրամայուելով իրենց բարձրագոյն կեանքի ազատութեան օրէնքէն: Ազատ բայց հպատակ: Ազատ արտաքին թոհոբոհէն և մեղքէն, սակայն հպատակ այն բարձրագոյն օրէնքին որ իրենց մէջ կը զգացուի և իրենց գործել կուտայ համաձայն գերագոյն դատաւորի պահանջքին: Բոլոր մեծ և ստեղծագործ անհատներ տէրն են այս ներքին ազատութեան: Այս իրողութեան է որ

կ'ակնարկէ գերման մեծ խորհողը երբ կ'ըսէ թէ՝ արուեստագէտը կը պարէ օրէնքի շրջաններուն մէջ, առանց խորտակելու զանոնք և առանց զգալու անոնց ծանրութիւնը իր հոգիին վրայ: Այս օրէնքով է որ պիտի դատուինք մենք օր մը երբ կենանք դատաստանի մեծ ու ճերմակ աթոռին տուջ, անկէ ընդունելու մեր վճիռը: Հոն է որ «առաջինները պիտի ըլլան վերջին և վերջինները առաջին»:

Հետեւաբար դատելու և դատապարտելու չափանիշը արտաքին իրողութեանց պատկանելի է աւելի, ակնարկութիւնն է մեր ներքին իրականութեան, մեր ներքին օրէնքին: Այնպէս մէջ գործադրուած օրէնքին համաձայն, ան որ կը գործէ, միայն ան կրնայ չահիլ իր հացը: Սակայն այս սկզբունքն անգամ ճիշդ չի գործադրուիր մեր կեանքին մէջ: Վասնզի անոնք որ չեն աշխատիր, կ'ունենան նորէն հոս իրենց հացը, և անոնք որ կը քնանան, ունին շատ աւելին՝ քան անոնք որ կը հսկեն օրն ի բուն:

Նոյն չէ սակայն պարագան հոգեւոր կարգի ազատութեանը և մարդկային կեանքի փոխյարաբերութեանը մէջ. հոն անձրեւը չի յայնար համահաւասար արդարին և մեղաւորին վրայ, ոչ ալ արեւը կը փայլի բոլորին համար հաւասարապէս: Հոն, այդ կարգին մէջ և դատաստանին առջեւ է որ գործողը պիտի ունենայ իր հացը և տառապողը իր հանգիստը:

Իրական և բացարձակ արդարութիւն չկայ մարդկային կեանքին մէջ, եթէ անոր չի հսկէ Ամենատեսին աչքը և չ'ուղղէ մեր սիրտն ու կամքը համաձայն իր արդարութեան և դատաստանին: Մենք յաճախ կը դատենք համաձայն երեւոյթներու և անոնց նկատմամբ մեր ունեցած նախասիրութեանց և կեցուածքին: Մենք կը դատենք համաձայն մեր շահերուն և մեր նեղմիտ հասկացողութեանց: Սակայն կեանքը երկու երես ունի, և յաճախ արտաքին պատճառները ճշգրիտ համեմատութեան չեն բերուիր արդիւնքին հետ: Բաներ կան որ մարդկային աչքերով չեն մակարեւորուիր, բայց Աստուծոյ աչքերով չեն մակարեւորուիր, և կը դատէ զանոնք համաձայն իր արդարութեան: Մարդկային արդարութիւնն ու դատաստանը նկատի ունի յաճախ զիտաւորութիւնը բայց լաւ դիտա-



ւորութիւնները միշտ լաւ արդիւնքով չեն երևիր: Ընդհակառակն կեղծիքն ու ունայնամտութիւնը յաճախ կրնան ասպետական արարքներով երևիլ: Կարելի է Յիսուսին պէս քարոզել, գործել խոնարհամտօրէն, ծառայել իր նմաններուն, լուալ անոնց օտքերը, և մատնանըչել անոնց գերագոյն բարին, բայց չ'ունենալ Յիսուսի ոգին:

Տակաւին մարդկային դատաստանն ու պատիժը կը պարունակէ իր մէջ վրէժխնդրական զգացումներ և կը նուիրագործէ ոճիրը: Քրիստոնէութիւնը չարիքին հակառակ չ'երթար զայն արգիլելու համար, վախճալով թէ որոմներու փճացման առիթով, արդար ցորենի հասկեր ևս կրնան արմատախիլ ըլլալ: Չարիքին դէմ միակ կռուելու կերպը բարիք անցնելն է, ահա քրիստոնէական կերպ մը զորս այսօրուան մանկավարժութիւնն ու բարոյագիտութիւնը կը կիրարկեն մարդերու անուշաման և բարիքին ի խնդիր:

Յետոյ դատելու և դատապարտելու համար մէկը, առնուազն զայն ինքնապաշտպանութեան մղել է, իր սխալին մէջ յամառելու առիթ տալով իրեն: Ի վերջոյ ամէն դատաստան դէպի վար նետուած ակնարկ մըն է, դատողը որ ինքզինքին իրաւունք կուտայ իր նմանին նկատմամբ արձակելու վճիռը, ինքզինքը իր դատապարտութեան առարկայ եղողէն վեր նկատելու հակամիտութիւնը ունի միշտ: Միայն ներողամտութիւնն ու սէրը կրնան լեցնել այն բացատը որ կը գոյաւորուի այս կերպ դատողին և դատուողին միջև: Իրական եղբայրութիւնը կը սկսի այն վայրկեանէն, երբ մենք իրաւունք չենք տար ինքզինքնուս դատաւոր կանգնելու մեր նմաններուն, «մի՛ դատէք զի մի՛ դատիցիք»: Օրէնքը միշտ անօրէն է, միակողմանի, մասնակի: Սիրոյ և ներողամտութեան մէջ աւելի շուտ և ճիշդ կը հաշտուին անարդարութիւնները, քան մարդկային արդարութեանը մէջ:

Եթէ ամէն ինչ իր փոխադարձը ունի կեանքի բոլոր մարզերուն վրայ, ներողամտութիւնն ու սէրն ալ իրենց աստուածային փոխադարձը ունին, գեր վիճակ մը զոր ունեցան սուրբերն ու արդարները, և կեանքը ապրեցան ու ապրեցուցին համաձայն

աստուածային օրէնքին և արդարութեան: Օր մը գերագոյն հաշուեյարդարին մենք պիտի չկրնանք պարծենալ մեր արդարութեամբ այլ մեր սրտի կեանքին բարիքովը: Մարդիկ միակողմանի ու ծայրայեղ են, կը ձգտին հոգեպաշտութեան ու կը միտին ճգնակեցութեան, կ'ուզեն հեռու մնալ մեղքէն և կ'իյնան օրէնքի լուծին ներքեւ, սպաննելով շատ յաճախ մարդկային ազատութիւնը: Լրջամիտները կը դառնան պիղի, խանդավառները՝ մոլեռանդ, ազատամիտները սկեպտիկ, ներուժն ու սէրը միայն կրնան բուժել անարդարութեան այս խոցը: «Մի՛ դատէք զի մի՛ դատիցիք, զի որով չափով չափէք նովին չափեսցի ձեզ»:

Շնորհալին՝ մարդկային արդարութեան և կեանքի տկարութիւններուն հանդիսատես, Աստուծոյ գթութիւնը կը հայցէր անոնց, փոխանակ Անոր արդարութեան, որուն առջև գուցէ ոչ ոք կրնար արդարանալ:

«Արդարութեամբ մի՛ դատեսցես,  
Այլ գթութեամբ քով քաւեսցես»:

Ե .

\* \* \*

Քրիստոնէութիւնը հայ ժողովուրդի աչքում լոյս է, ուստի եւ անոր մասակարարը «Լուսաւորիչ»: Այդ լոյսը մարդկային չէ եւ ոչ նիւթական, այլ՝ երկնային: Լուսաւորչի կանքեղի, հրաւայի, ժողովրդական սփանջելի բանաստեղծութեամբ յօրհնուած աւանդութիւնը, այդ հայեացիի եւ հաւաստի յայտարարն է: Արագածի զագաթին կախուած է երկնքից այդ կանքեղը, որի մէջի իւրը փոխառէն Լուսաւորչի արցունքն է, միօս բարեխօս Աստուծոյ առաջ որ անմար մնայ՝ խաւար կեանքի լուսաւորող այդ կանքեղը:

\* \* \*

Կրօնի հիմքը մարդու դէպի Աստուած ունեցած հենարանի հասարկ է. բայց մի հաւատ, որ ցնո՞ւր, երեւակայութիւն չէ, այլ իրական, շօտափելի, ինչպէս տեսնելի իրերը:

ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ



## Վ. Ա. Ր. Գ. Ա. Ն. Ի Ս Ի Ր Տ Ը

3

Տոն էր լոյսի,  
 Ու դպիրներ հաւատեալն,  
 Քարգմանիչներ,  
 Ուսուցանող ակումբներ,  
 Կ'աւանդէին ցորենն ոսկի,  
 Գիրը կախարդ,  
 Կոյս միսքերուն հայ աշխարհին:

Շարժէր հզօր,  
 Սիրին վրայ մեր սուրբ հողին,  
 Առունքուն նրման զուարթ,  
 Կը վազէին,  
 Մասադերամ ու ծրամիս  
 Մանուկներ բիր,  
 Նոր զարունին,  
 Հանդերձելու միսքը հայուն  
 Անպաստար,  
 Մեծ բարիքէն նոր օրերու:

Ձեռք մ'Հերթիւեան,  
 Լուսապայծառ,  
 Խաւարին դէմ խաւարեւէն,  
 Կը դարձնէր անա նորէն  
 Անին անհուն  
 Հակասագրին մեր դարերուն:  
 Հոնիչին հետ այդ զարթուցիչ,  
 Կ'արթննային,  
 Մեծ բմբիւրէն ժամանակին,  
 Բիր հոգիներ,  
 Աշխարհ մ'ամբողջ,  
 Կողկողագին մութէն դէպի  
 Լոյսը վազող:

Շարժէր հրզօր,  
 Եւ օտարին խեցքեկ ու խուժ  
 Բարբառին տեղ,  
 Կը լուրէր քաղցր ու ներդաշնակ  
 Խօսքը հայուն,

Հողին վրայ մեր արեգքեր,  
 Իբրեւ լուսն քնար սօսեաց,  
 Կախուած հովի  
 Սահանքին դէմ:

Փեթակներու նրման անդու,  
 Դպրոցներ բիր,  
 Մեղրն հանդերձող սերունդներուն,  
 Լոյս հայրապետ  
 Մութ դարերուն,  
 Կամարն որոնց ծիածանին,  
 Պիտի ձգուէր,  
 Համբուն վրայ մեր պատմութեան,  
 Այսօր ու վաղ  
 Եւ յաւիտեան:

Մանուկն Վարդան  
 Աւսուածարեալ իր մեծ պապի  
 Մասի համբէն  
 Ժիր ու հըլու  
 Առնող իր քայլ:

Ծունկի եկած մեծ հսկողի  
 Սեղանին քով,  
 Մագաղաթին վրայ ոսկի  
 Այն օրերուն,  
 Կ'ուրուագէր,  
 Գաղտնիքն արագ հայ տառերուն:

Ու մայրն անոր Սահականոյց,  
 Ի լուր մանկան  
 Հրոուողունին զուարթաձայն,  
 Արցունքին մէջ  
 Ուրախութեան,  
 Կը զգար բեղիւսն այն անանուն  
 Ձոր լոկ մայրեր գիտն զգալ,  
 Ձաւկըներուն համար իրենց  
 Ապագայի մը կանչուած:



Ու կը թըլէր  
 Մօրք տեսնել,  
 Մանկան անվարձ մասներուն տակ  
 Մագաղաթն այն,  
 Դաւոյ մը ինչպէս  
 Անծայրածիր,  
 Լեռներէ լեռ, հովիտէ հովիտ,  
 Միակեանք  
 Փռուող, ձգուող,  
 Եւ գիրքնու շուքներուն տակ,  
 Շարժէր հզօր բանականներու  
 Հիւսիսներէն ու հարաւէն  
 Իրար եկող:  
 Ու նետներու տարափին տակ,  
 Ամպերու պէս կը գոռային  
 Զոյգ բանականներ,  
 Հնոցէն դուրս նետուող, մարող,  
 Կայծերու պէս,  
 Կը ջարդուէին զօրակաւներ,  
 Եւ ձիերու խրխինջին մէջ  
 Տիրահնչիւն,  
 Կը ձայնէին ռազմի փողեր:

Շարժէր հզօր,  
 Ու մանգաղէն թափալ ինկող  
 Հասկերու պէս,  
 Կը հնձուէին  
 Բիր հասակներ,  
 Եւ բոցավարս  
 Դրօշներու նման կանգուն,  
 Կը գոռային հրամանաբաշխ  
 Զօրականներ:  
 Ու անոնց մէջ  
 Բոց մը ինչպէս կապուտագեղ,  
 Մանուկն Վարդան,

ձերմակ ձիուն վրայ նըսած  
 Կ'առաջնորդէր գունդերը գոռ  
 Դէպի դաւոյ մը շուքներուն:

Շուրջն իր մարդեր,  
 Մութ, դալկադէմ,  
 Բըզբէտուած որաներու  
 Նըման հիւսուած են իրարու  
 Թեւ ու նիզակ,  
 Սուր ու վահան:

Խրոյսապանձ ան կը կենար,  
 Սաղաւարտով արոյրաւէն,  
 Զեռքին՝ սուսերն մեր պատմութեան  
 Որ կ'աղօսէր բանական անհուն  
 Թըքնամիտ,  
 Նըման նաւու ցոռիկին սուր,  
 Որ կը նեղէր ծովն ալեկոծ,  
 Կուրծքն իր ըրած  
 Դալիք մահուան  
 Մեծ նշանակ:

Յետոյ խաւար, խաղաղարար,  
 Բայց չարաւուր,  
 Հովէն զարնուած  
 Կաղնին ինչպէս  
 Կը տապալէր մեծ ռազմավարն:

Յուզումը խոր կը բանայ թեւ  
 Դէմքին կնոջ,  
 Ու կը թըռի իր քրքներէն  
 Ճիշդ խորունկ,  
 Ապագայի պատկերին դէմ  
 Մահաաւարտուն:

ԵՂԻՎ ԱՐԴ





## ՀԻՆ ԷՋԵՐ

## ԲԱՆ ԽՐԱՏԱԿԱՆ

Յովհաննէս Թլկուրացիի հետեւեալ խրատական տաղը հրատարակած է Կիւլէսէր-  
եան, առնելով Ս. Յ. մէկ ձեռագրէն, գրուած 1786ին, Բենկըցի Դարբինեան Յակոբէն  
(Պատմ. Կթղ. Կիլիկիոյ, էջ 117):

Ուրիշ ձեռագրի մը մէջ, Թ. 1950, որ նոտրագիր եւ բոլորգիր խառն ժողովածու  
մըն է, գտանք նոյն տաղը «նորին Յովանիսի բան խրատական» վերտառութեամբ (էջ  
136): Այս տարբերակը աւելի լաւ ընթերցուածներ ունի, հետեւաբար արժանի կը դա-  
տենք հրատարակութեան:

Կիւլէսէրեանի հրատարակածին կարեւոր տարբերութիւնները իբրեւ ծանօթութիւն  
կը դնենք լուսանցքի վրայ:

Անծն իմ ընդէր եղեր շընոց,  
Չայեղդ կուգայ ամէն փողոց,  
Յորժամ լըցար անչափ<sup>(1)</sup> չար[ե]աւք,  
Ժառանգ լինիս չար դըժոխոց:

Ձինչ շահ եղեւ քեզ կամ աւգուտ,  
Որ հեռացաւ ի սուրբ գործոց<sup>(2)</sup>  
Յաստէնս զանունդ պղծեցիր,  
Անդէն վառես քեզ հուր ու բոց:

Այլ մի մընար արքայութեան,  
Քեզ կու մընան անդունդք խորոց,  
Ուր<sup>(3)</sup> կայ խաւար եւ տարտարոս,  
Անքուն որդունքն եւ հուր հընոց:

Վաղ գիտէի անծն իմ ըզբեզ,  
Որ զըլտիվայր էիր գալոց,  
Յորժամ<sup>(4)</sup> գինոյ եղեր սիրող,  
Երբ որ ուսար շատ մի հաջոց:

Ձի խրատու<sup>(5)</sup> եղեր բազմաց,  
Եւ ուսուցիչ ի սուրբ գրոց,  
Երբոր ի ծայր չելեր բարոյն,  
Ամէն գնաց ի հետ ջրոց:

Ես այլ ումեք չեմ մեղադրեր,  
Դու ես արեր գիտ գան եւ խոց,  
Թէպէտ կորեար զանգիւտ կորուստն,  
Պատմառ լինիս մեղաց շատոց:

Ձինչ շինեց[ց]ր ի փուլ տարար<sup>(6)</sup>  
Կըրկին եւ այլ չես շինելոյ,  
Եղուկ եւ վայ է ինձ գերոյս,  
Ասա թէ ինչ եմ լինելոց:

Ի ծերութեանդ զլորեցար,  
Յորժամ զմեղքդ էիր քաւելոց,  
Կարիք չունի թէ դարձ ունիր,  
Վախեմ թէ հանց ես մընալոց:

Իմաստութիւն առանց երկիւղ,  
ԸզՍողոմոն յանդունդս իջոյց,  
Թէպէտ յաստէնս էր փառաւոր<sup>(7)</sup>,  
Յանդէն<sup>(8)</sup> եղեւ փոքր եւ գծուծ:

Մարմին արա չարաց<sup>(9)</sup> հերիք,  
Յաստէս յանդէն ենք փոխելոց,  
Ձինչ գէշ ու լաւ որ գործեցինք<sup>(10)</sup>,  
Մեզ առաջի են դրնելոց:

Լաց ւ արտասուէ զօրհանապազ,  
Աղաչէ զՏէրն արարածոց<sup>(11)</sup>  
Աստուած զըթած եւ ողորմած<sup>(12)</sup>  
Քաւիչ մեղաց մեղուցելոց<sup>(13)</sup>:

Նա զամենայն ոք խընամէ,  
Կանկնէ զանկեալն ի գլորելոց,  
Ինքն է բարեաց<sup>(14)</sup> պարգեւատու,  
Դարձ եւ դարան մոլորելոց:

Խեւ Յովանէս լըցեալ մեղօք,  
Թէ ասելոց ես լսելոց,  
Երթ ի լերինն բընակեաց,  
Կամ հետեւիր զհետ սըրբոց<sup>(15)</sup>:

Հրատ. Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ

<sup>(1)</sup> Ամէն: <sup>(2)</sup> Գրոց: <sup>(3)</sup> Ուր: <sup>(4)</sup> Որ: <sup>(5)</sup> Խրա-  
տառու: <sup>(6)</sup> Ի փուլ տարար:

<sup>(7)</sup> Աստէն սէր զօրաւոր: <sup>(8)</sup> Ընդէն: <sup>(9)</sup> Չար-  
եաց: <sup>(10)</sup> Որ գծեցեր: <sup>(11)</sup> Ըզկոյսն, սուրբըն  
սրբոց: <sup>(12)</sup> Որ բարեխօսէ իւր Միածնին: <sup>(13)</sup> Որ  
ողորմի մեղաց մեղոց: <sup>(14)</sup> Բիւրուց, ձեռագիրն  
ունի, բարեաց: <sup>(15)</sup> Դուք Սուրբ Գրոց:



**ՊԱՏՄԱԿԱՆ****ԵՂԻՇԷ ՊԱՏՄԱԳԻՐ**

ԵՒ

**ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄԸ**

ՅԱԻԵԼՈՒԱՅ

**ՄԱԶԴԷԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ****ԵՒ ԱՆՈՐ ԴԱԻԱՆԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ**

Կիւրոսի կողմէն հիմնուած Պարսկական կայսրութեան մէջ հետեւել կայսրերն Նշա- նաւոր հանգիստացան, Դարեհ Ա., Քսերքսէս, Արտաշէս Ա. (Երկայնաբազուկ), Արտաշէս Բ., Արտաշէս Գ. և Դարեհ Գ. Կոտուման:

Դարեհ Ա. Պարսկաստանի թագաւոր եղաւ 521-485 (Ն. Ք.): Հետզհետէ տիրեց Հնդկաստանի, Թրակիոյ, Մակեդոնիոյ և ուրիշ շրջակայ երկիրներու, սակայն Մա- րաթոնի մեծ ճակատամարտին մէջ Յոյնե- րէն յաղթուեցաւ (490 Ն. Ք.): Քսերքսէս (պարսկերէն Քշաեարշա = Khshayarsha) Դարեհ Ա.ի որդին էր, որ իրեն յաջորդեց 485-465-ին: Եգիպտոսի մէջ, կայսրութեան զէմ ապստամբութիւն մը ծագած ըլլալով, զսպեց զայն և Եգիպտոս վերստին ենթա- կրեցաւ Պարսկական տիրապետութեան: Յունաստան արշաւեց և ասպատակեց Ատ- տիկէն, աւերեց և թալանի տուաւ Աթէն- քը: Հակառակ կարգ մը յաջողութեանց, Սալամինէի ծովային ճակատամարտին մէջ յաղթուեցաւ և ստիպուեցաւ փախչիլ զէպի Փոքր-Ասիա: Յոյները պարսկական ռազ- մանաւերը հրոյ ճարակ ըրին Եգէական ծո- վուն մէջ: Արտաշէս Ա. (Երկայնաբազուկ) որդին էր Քսերքսէսի, 465-425 (Ն. Ք.): Դարեհ Բ. թագաւորեց 424-404 (Ն. Ք.), Սպարդայի օգնութիւն ընձեռեց, Աթենա- ցիներուն զէմ: Դարեհ Գ. Կոտուման, Մեծն Աղեքսանդրէն չարաչար պարտուեցաւ Ի- սիսի և Արքելլայի ճակատամարտներումէջ, և փախուստի ժամանակ սպանուեցաւ: Իրմով վերջացաւ Պարսկական ընդարձակ

կայսրութիւնը, ինչպէս նաև Աքիմենեան, Հարստութիւնը (\*):

Արտաշիր Սասանեան որդին էր Բարե- քի, Պարսկաստանի Իսթաքար նահանգի մէջ, նահանգային վեհապետը: Արտաշիր Սասանեան, հզօր և իշխող նկարագրի տէ- անձնաւորութիւն մը, յաջողեցաւ վերջ տալ Արշակունեանց Հարստութեան և ինքը ի- հիմնած նոր կայսրութեան գահը բարձրա- ցաւ:

Արտաշիր Սասանեան սուրէ անցուց- Արշակունեանց Հարստութեան արու և էջ- բոլոր անդամները, սակայն և այնպէս քա- նի մը երեւելի և մեծ իշխանազուններ յա- ջողեցան Հայաստան փախչիլ և հոն ապստ- տան գտան: Յաղթական Արտաշիր Սասանե- անը, Տիգրոն քաղաքը իր նորահաստա- կայսրութեան մայրաքաղաք հռչակեց, ու- ռուն հռչակաւոր մայրապալատը մեծ համ- բաւ ունէր բովանդակ Պարսկաստանի մէջ: Ան, ինքզինքը «Իրանեաններու արքայից արքայ» հռչակեց: Արտաշիրի կողմէն հիմ- նուած կայսրութիւնը որ կրնանք նոր Պարս- կական կայսրութիւն կոչել, բոլորովին տար- բեր նկարագիր մը ունէր, նախորդ Արշա- կունեանց Հարստութեան: Աւելին, Սա- սանեանց Հարստութիւնը կարծես թէ Աքի- մենեանց Հարստութեան շարունակութիւնը ըլլալ կը թուէր:

Այս նոր պետութիւնը իր խորքին մէջ ազգայնական և կրօնամոլ կայսրութիւն մը եղաւ առաւելաբար: Սասանեանց Հարստ- ութիւնը օրէ օր ընդարձակուեցաւ և իր ժամանակուան ամենէն հզօր և լաւ կազ- մակերպուած կայսրութիւնը եղաւ: Արտա- շիր Սասանեանին յաջորդեց իր որդին Շա-

(\*) Աքիմենեանց Հարստութեան թագաւորնե- րուն ցանկը. —

1. Կիւրոս (558-528), Մարաց յաղթական 558 և Բաբելոնի թագաւոր 538-էն սկսեալ (Ն. Ք.):
2. Կամբիսէս (528 - 521):
3. Շմերդ (521 - ):
4. Դարեհ Ա. (521 - 485):
5. Քսերքսէս Ա. (485 - 465):
6. Արտաշէս կամ Արտաշիր Ա. (465 - 425):
7. Քսերքսէս Բ. (425 - 424):
8. Դարեհ Բ. (424 - 404):
9. Արտաշէս կամ Արտաշիր Բ. (404 - 359):
10. » » Գ. (359 - 338):
11. Արտէս? (338 - 336):
12. Դարեհ Գ. Կոտուման (336 - 330 Ն. Ք.):



պուհ Ա. որ իր հօրը վարած քաղաքակա-  
նութիւնը շարունակեց: Շապուհ Ա. իր  
հօրմէն աւելի առաջ անցաւ և ինքզինքը  
սիրան և Անիրան ժողովուրդներու ար-  
քայից արքայ», «Շահ ան շահ» հռչակեց:  
Շապուհ Ա. թագաւորին յաջորդներն ալ  
պահեցին այդ տիրոջ ուր: Արարական ար-  
շաւանքին՝ վերջ գտաւ Սասանեանց Հարսու-  
տութիւնը 632-ին (Յ. Ք.):

Պ.

### Սասանեանց Հարսուտեան Երջանին Ժողովրդային Բաժանումները

Սասանեանց Հարսուտեան շրջանին,  
Պարսկաստանի բնակչութիւնը հետեւեալ  
չորս խաւերի գոտակարգերու կը բաժնուէր:

1. Կրօնականները, մոգերու և քուր-  
մերու գոտակարգը:
2. Պատերազմիկները, զինուորական  
գոտակարգը:
3. Դիւաններու կամ զիւանատուննե-  
րու մէջ աշխատող գոտակարգը:
4. Երկրագործները, արհեստաւորները  
և ռամիկ գոտակարգը:

Կրօնականները իրենց միջև ստորաբա-  
ժանումներ ունէին, մեծ մասամբ դատա-  
ւորներէ բաղկացած Կղերականութեան գա-  
տակարգութիւն մը կար, քուրմերու և մոգե-  
րու գլխաւորութեամբ: Պարսկական արքու-  
նիքին մէջ գոյութիւն ունէր կրօնական  
կազմակերպութիւն մը, որուն պաշտօնն էր  
երկրին և պետութեան կրօնական գործերը  
վարել ըստ պարսկական դէնին օրինաց և  
կանոնաց: Պարսիկները ի հնուց անտի, ոչ  
միայն կրօնասէր, այլ՝ կրօնամոլ ժողովուրդ  
մը եղած են: Սասանեանց Հարսուտեան  
շրջանին, արքայից արքաները արքունիքին  
մէջ մեծ թուով մոգեր ու մոգպետներ ու-  
նէին, որոնց պաշտօնն էր, ի մասնաւորի  
պատերազմներու ժամանակ, անոնց խոր-  
հուրդ տալ և կրօնական գործերը ղեկա-  
վարել:

Իսկ Պարսկաստանի բացարձակ պետու-  
թիւնը (Bureau-cratie), իր մէջ կը պարու-  
նակէր ընտրանի և ազնուական գոտակար-  
գը, որոնց մէջ բացի զբազէտներէ և խմ-  
բադիրներէ կային բժիշկներ, բանաստեղծ-  
ներ, աստղարաշխներ, գիտուններ, ղեկա-

վար առաջնորդներ և վաճառականներ,  
վերջապէս Պարսկաստանի ազնուական և  
բարձր գոտակարգի անդամները, որոնք  
երկրին ռամիկ ժողովուրդներէն կը զանա-  
զանուէին իրենց հարստութեամբ և զիրքով:  
Յետոյ Պարսկաստանի վաճառականութիւնը  
և արտաքին արևտուրը այս գոտակարգին  
մենաշնորհն էր: Ի հնուց անտի Պարսկա-  
ստանի վաճառականները և առևտրականները  
նշանաւոր եղած են, վասնզի՝ Պարսկա-  
ստանի ունեցած զիրքը, կերպով մը անցք  
մը եղած էր արևելքէն-արևմուտք և անոր  
շնորհիւ Պարսկաստանի մէջ ծաղկած էր  
վաճառականութիւնը:

Շնորհիւ երկրին ջրագրութեան, Պարս-  
կաստանը արգասաբեր և արգաւանդ եղած  
է երկար դարերէ ի վեր, որոնք պատճառ  
եղած են երկրին արգասաբերութեան, վա-  
ճառականութեան ծաղկումին, զարգաց-  
ման, արդիւնաբերութեան և հարստութեան:

Ե.

### Թագաւոր և արքունիք

Պարսկաստանի պետական դրութիւնը  
է

Երկրին կառավարական պատշոնակալները

Սասանեանց Հարսուտեան շրջանին,  
Պարսկաստանի Արքայից-արքաները, միա-  
հեծան և իշխող տէրն էին իրենց բովան-  
դակ հպատակներուն, ըլլան անոնք Պարս-  
կադէն կամ ալլադէն: Տէրութեան բոլոր  
հպատակները, ինչ զիրք և իշխանութիւն  
ալ ունեցած ըլլալին, պարտաւոր էին Ար-  
քայից արքային հնազանդիլ և հպատակիլ:  
Այսու ամենայնիւ, Տէրութեան բոլոր հպա-  
տակ ժողովուրդները, ազատ ու անկաշ-  
կանդ էին առևտրականութեան, արուես-  
տից և արհեստներու մէջ:

Սակայն անոնք բոլորը, անխտիր հար-  
կադրուած էին որոշեալ սակով մը պետա-  
կան տուրք վճարել և զինուորագրուիլ երբ  
պետութիւնը հրամայէր ի դէպ պատերազմի  
մանաւանդ: Արքայից արքան, իր արքու-  
նիքովը և իր արքունական բարձրաստիճան  
պաշտօնակալներով միասին, մայրաքաղաք  
մը ունէր (ի Տիզբոն), ուր՝ ի միջի այլոց,  
Տէրութեան աւագանին, բարձրաստիճան  
պաշտօնակալները, մոգերն ու մոգպետները,



իշխաններն, իշխանազուններն, ինչպէս նաեւ երկրին բանակին սպարապետը և սպայակոյտը, զինուորական ու քաղաքային պաշտօնեաները և հրամանատարները կը բնակէին:

Ամէն բան, Արքայից արքայէն կախում ունէր: Ան էր երկրին տէրն ու զեկալարը: Սակայն և այնպէս, Արքայից արքաները, կրօնականներու ազդեցութեան ներքեւ կը գտնուէին և անոնք էին որ ուղղութիւն, խրատ և թելադրութիւն կուտային անոնց, ինչպէս պատահեցաւ Յազկերտ Բ. ի թագաւորութեան ժամանակ, որուն գլխաւոր խորհրդականը, առաջնորդը և ուղղիչն եղաւ Միհրնեստէր հազարապետը:

Պարսկաստանի պետական դրութեան մէջ, երկու գլխաւոր պաշտօններ կային, մին՝ զինուորական, իսկ միւսը՝ քաղաքային: Ասոնցմէ իւրաքանչիւրը, երեք զըլխաւոր պաշտօնակալներ ունէր իր հրամանին ներքեւ անոր ենթակայ մնալով:

Զինուորական երեք բաժանումներն էին հետեւեալները.

1. Սպարապետութիւն (Commadement de général en Chef):

2. Հեծելազօրքի հրամանատարութիւն (Commadant en Chef de la Cavalerie):

3. Զինուորական համբարապետութիւն (Indendance):

Իսկ քաղաքային երեք բաժանումներն էին հետեւեալները.

1. Քաղաքային գործերու վերակառուութիւն կամ Տեսչութիւն (Inspection Civile):

2. Իրաւարար դատաւորութիւն (Arbitre Judicature):

3. Տուրքերու հաւաքման պետ կամ պետական գանձերու քննիչ (Chef pour le trésor de l'Etat):

Պարսկական բանակը հետեւազօրքերէ և հեծելազօրքերէ կը բաղկանար: Անոնցմէ իւրաքանչիւրը իր ուրոյն հրամանատարն ունէր: Երկու հրամանատարներն ալ Արքայից արքային ենթարկուած էին: Պարսիկները նամանաւանդ բերդեր և քաղաքներ պաշարելու արուեստին մէջ մեծ ճարտարութիւն և հնարք կը ցուցնէին: Պարսկաստանի ելեւմտական դրութեան մէջ, պետութեան տուրքը կարեւոր եկամուտ մը կը

կազմէր երկրին տնտեսութեան մէջ: Պետութիւնը եթէ պէտք տեսնէր, յաւելում ծական տուրքեր կը սահմանէր, որուն մպետական գանձերու քննիչը մեծ հեղինակութիւն ունէր: Այնպէս որ պետութեան մտից և ելից ծախուց մէջ ունէրաց, տուրքերու հասոյթէն առաջ եկած բացառիկ ստիպողական տուրքերով կը հաւասար կըշուէր: Պարսիկներու մէջ, երեք տեսածիրներ կային, այդ ոճիրներուն համար մասնաւոր օրէնսդրութիւն մը կար, որուն մէջ մէն մի ոճիրի համաձայն կիրարկուած օրէնքը ամենախիստ միջոցներով կը զործադրուէր:

1. Աստուծոյ դէմ. երբ հպատակ մը կը յանդգնէր իր կրօնքը փոխել ուրիշ ունէնոր կրօնք մը դաւանելով, ենթական ամենախիստ պատիժի կ'ենթարկուէր:

2. Արքայից արքային դէմ. հպատակ ունէ ժողովուրդ մը Արքայից արքային դէմ մեծագոյն ոճիրը գործած կ'ըլլար, երբ ի մասնաւորի ապստամբութեան ժամանակ կամ պատերազմի ժամանակ, բանակէն գաղտագողի կը հեռանար, առանց լուր տալու իր պետին:

3. Ընկերին դէմ. երբ մարդ մը իր ընկերը կը հարստահարէր և կը կեղքէր:

1 և 2 ոճիրները, առանց ալլեալի և առանց ունէ առարկութեան, նոյնիսկ առանց մեկին և վճռական փաստերու մահուան պատիժի կ'ենթարկուէին: Իսկ յանցապարտ և պատժապարտ մարդոց ընտանիքին և մօտաւոր ազգականաց, արքունիքին կողմէն, պետական գանձերու քննիչին հաւանութեամբ անոնց որոշեալ տուգանք մը կը սահմանուէր:

Իսկ երրորդը, փոխ վրէժով կամ արեան գինով կը վերջանար (ակն ընդ ական, ատամն ընդ ատամն սկզբունքով):

Պարսկական կայսրութեան մէջ, հին ժամանակներէն սկսեալ, կուրացումն ալ պետական պաշտօնական պատիժներէն մին էր, նամանաւանդ, պետութեան ապստամբ, խոտուածագործ զաւաճան իշխաններու դէմ:

Իսկ պետութեան և կրօնքին դէմ զաւաճան մը, խաչելութեամբ կը պատժէին և կամ կը մօրթէին, ինչպէս ըրին Մանիին («տե'ս Եզնիկ Կողբացի, Գիրք Երկրորդ, Եղծ Քէշին Պարսից Բ. էջ 128):



Պարսկաստանի չորս ծագերուն մէջ բազմակնութիւնը կը տիրէր ամենուրեք: Կինը, իր ամուսինէն ստորադաս մէկը կը նկատուէր, նէ պարտաւոր էր կատարեալ և անպայման հնազանդութիւն ցոյց տալ իր ամուսինին: Պարսկաստանի մէջ ալ, արեւելեան հնօրեայ սովորութեանց և աւանդութեանց համաձայն, փոքր տղաք և աղջիկներ իրարու հետ կը նշանէին, իրենց միջև ընտանեկան կապերը ամրապնդելու և տեւականացնելու համար: Բաց աստի, Պարսկաստանի մէջ, մօտիկ կամ մերձաւոր ամուսնութիւնները շատ տարածուած էին: Զորօրինակ, եղբայր մը կրնար իր հարազատ քրոջը հետ ամուսնանալ և փոխադարձաբար: Հայր մը կրնար իր աղջկան հետ ամուսնանալ և ինչ. և ինչ: Տէրութեան մէջ զոնուող ամէն ոք, կրնար իր անձնական սեպականութիւնն ունենալ, բաւական էր որ, պետութեան կամ արքունիքին նշանակած որոշեալ տուրքը վճարէր:

Սասանեանց Հարստութեան, Արքայից արքաներու ցանկը.

1. Արտաշէր Ա. (226-241 Յ. Ք.)
2. Շապուհ Ա. (241-272 » » )
3. Ուրմիզդ Ա. (272-273 » » )
4. Վահրամ Ա. (կամ Վուամ Ա.) (273-276 » » )
5. Վահրամ Բ. (կամ Վուամ Բ.) (276-293 » » )
6. Վահրամ Գ. (կամ Վուամ Գ.) (293 » » )
7. Նարշէ (Ներսէս) (293-302 » » )
8. Ուրմիզդ Բ. (302-310 » » )
9. Շապուհ Բ. (310-379 » » )
10. Արտաշէր Բ. (379-383 » » )
11. Շապուհ Գ. (383-388 » » )
12. Վահրամ Գ. (կամ Վուամ Գ.) (388-399 » » )
13. Յազկերտ Ա. (399-420 » » )
14. Վահրամ Ե. Գոռ (կամ Վուամ Ե.) (420-438 » » )
15. Յազկերտ Բ. (\*) (438-457 » » )
16. Ուրմիզդ Գ. (457-459 » » )
17. Պերոզ Ա. (459-484 » » )
18. Բաւաշ Ա. (կամ Վաղարշ Ա.) (484-488 » » )

(\*) Յազկերտ Բ. ի թագաւորութիւնը 19 տարի տեւեց, այսինքն՝ 438-457, որուն թագաւորութեան օրով տեղի ունեցաւ Վարդանանց Պատերազմը (26 Մայիս 451ին):

2.

## Զրադաւես եւ Զրադաւեսականութիւնը

Զրադաւատ, որ՝ Զրադաւատական կրօնքին հիմնադիրն էր, Պարսկներու կրօնից պատմութեան մէջ, մոգութեան բարեկարգիչ մը կը ներկայանայ: Ան՝ ըստ ոմանց, արեւելեան նախահնութեան միսթիք խաւարներուն մէջէն երևցաւ, իբրեւ նոր օրէնսդիր մը և իբրեւ մարգարէ, փրկիսփայ և քարոզիչ նոր վարդապետութեան մը, հինին տեղ նոր և բարեկարգեալ կրօնք մը քարոզելով: Ոմանք կը կարծեն թէ, ան՝ երեւակայական և առասպելական անձնաւորութիւն մըն էր: Իսկ ուրիշներ կը կարծեն թէ, ան ապրած էր, շատ հաւանաբար Աքիմենեանց Հարստութեան շրջանին, Կիւրոս, Կամբիւսէս և Դարեհ Ա. թագաւորներու ժամանակ (Զ-ն դար Ն. Ք.): Զրադաւտ անունը (Պարսկերէն՝ Զէրտուշտ) ղեղին, ոսկեգոյն կամ խարտեաշ ուղտեր ունեցող՝ կը թարգմանուի: Ըսողներ ալ եղած են թէ՝ Զրադաւտ, Աքիմենեանց Հարստութեան ազնուական սերունդէն սերած անձնաւորութիւն մըն էր: Յրանաացի հմուտ և հռչակաւոր բանասէր, Պրն. Կոստանդին Վոյնիի համաձայն, ըստ Յուստինիանոսի բնագրին, Զրադաւտը, Նինոսի և Սեմիրամիսի ժամանակ կը զնէ 200 տարի առաջ Ն. Ք.: Պէտք է ըսել թէ, մէկէ աւելի Զրադաւտ անունով անձեր գոյութիւն ունեցած են իբրեւ բարեկարգիչ մոգութեան, որոնք յընթացս դարերու իրարու հետ չփոթուած, նոյնացած և միախառնուած են: Սակայն բուն Փարսիները, որոնք Հնդկաստանի Պոմպէ քաղաքին մէջ կը բնակին, թուով մօտ 100.000 անձեր, իրենց ունեցած հնամենի և պատմական գրութեանց և յիշատակարանաց մէջ, Զրադաւտը, Կիւրոսէն քիչ ժամանակ առաջ ապրած ըլլալը կը յայտնեն և կ'ընդունին: Վաղնջական և հնամենի զրոյցներ, աւանդութիւններ, Միջին դարուն մէջ մանաւանդ, Զրադաւտի անձի մասին չփոթութիւն մը ստեղծեցին: Զանազան հեղինակներ, մը ստեղծեցին: Զանազան հեղինակներ, Զրադաւտի մասին գրած են, ինչպէս՝ Դիոգենէս Լաէրտացին, Դիոգենէս Սիկիլիացին, Յովհաննէս Ոսկերեքեան հայրապետ, Կղեմէս Աղեքսանդրացին, Եւսեբիոս Սուրբազան, Պլուտարքոս ինչպէս նաև ուրիշ զանազան մեկնիչներ և պատմագիրներ: Պահլաւ մեկ-



ներհներ և գրիչներ զայն Ջարտուշտ կամ Ջրատուհաշտ կը կոչեն: Իսկ Արաբացի պատմագիրներն և զանազան մեկնիչներ զայն Իպրահիմ Ջարտուշտ կ'անուանեն: Փարսիները զայն Ջարատուշտ կը յորջորջեն: Սակայն և այնպէս, հակառակ վերև յիշուած վկայութեանց և տեղեկութեանց, սեպագծե արձանագրութիւններու մէջ, Ջրադաշտ կամ իր ալլափոխուած անունով ոչ մէկ յիշատակութիւն գոյութիւն ունի, համեմատութեան գրութեան համար: Իսկ Յունական գրականութեան մէջ, ամենէն աւելի գործածական անունն է Ջարոստրա կամ Ջորահաստրա: Ի վերջոյ, զանազան բանասէր գիտնականներ անոր իմաստը և նշանակութիւնը ուղեցին ճշդել: Ոմանք, այդ անունը երկու մասերու կը բաժնեն: Ջարա = ոսկի, իսկ Դուստրա = փայլ, Ուստրա = ուղտ: Հետեւաբար, Ջարոստրա կամ Ջորահաստրա կը նշանակէ ոսկեփայլ ուղտեր ունեցող, թերևս ուղտ բառը համբերութիւն խորհրդանշանով գործածուած է: Սակայն Տարմես-Թեթեր գերմանացի ականաւոր գիտնականը անոր իմաստը կ'ալլափոխէ և անոր ուրիշ նշանակութիւն մը կուտայ, պտղատու կամ պտղաբեր նուէր իմաստով: Իսկ Պերոզ<sup>(1)</sup> Ջրադաշտը կը յիշէ որ ապրած է 2200 տարիներ առաջ Ն. Ք., որ Բաբելոնի մէջ մարական կայսրութիւն մը հիմնած էր: Կան նաև ուրիշ բազմաթիւ հեղինակներ, որոնք սոյն Ջրադաշտը, Քաղզէացի համանուն մողի մը հետ կը շփոթեն, որուն համար կ'ըսուի թէ, ան Պիւթագորասի<sup>(2)</sup> ուսուցիչը եղած էր: Ուրիշ կարգ մը հեղինակներու համաձայն, Նինոս թագաւորին կողմէն յաղթուած Բաւկերիոյ թագաւորը ուրիշ մէկ չէր եթէ ոչ նոյն ինքն Ջրադաշտը: Ուստի այս վկայութեան համաձայն, ան ապրած պէտք էր ըլլայ ԺԳ. դարուն (Ն. Ք.): Կնիտցի Եւդոքոսը, որ Յոյն նշանաւոր աստղաբաշխ մը եղած էր իր ժամանակին, Ջրադաշտը 6000 տարիներ առաջ կը դնէ Պղատոնի մահէն: Իսկ Քնիտցի Թէոպոմպոսը, Ջրադաշտը, Տրովադայի պատե-

րագմներէն<sup>(3)</sup> 5000 տարիներ առաջ կը դնէ: Լիտիացի Քսանդոսը, Ջրադաշտը Քսերքսէսի թագաւորութենէն Ջ. դար առաջ:

Ամմիանոս Մարկիղինոս ու Լատին պատմիչը (Դ. դար Յ. Ք.), Դարեհ Ա. թագաւորութեան ժամանակ կը դնէ զայն: Իսկ Սասանեանց Հարստութեան ժամանակակից մատենագիրներ, Դարեհ Ա. թագաւորակից կը նկատեն զայն: Սակայն ընդհանուր առմամբ, նոյնիսկ Միջնադարեան Պարսիկ մատենագիրներ Դարեհ Ա. չայրը, Ջրադաշտական զրոյցներով և առասպելներով կը շփոթեն Ջրադաշտին հետ: Ոմանք՝ Ջրադաշտի հայրենիք կուտան Պարսկաստանի արևմուտքը, ուրիշներ՝ Մարաստանը, այլք՝ Բաւկերիոյն և ինչ. և ինչ. Կարգ մը Պարսիկ մատենագիրներ կ'ըսեն թէ, Ջրադաշտը Բաւկերիոյ թագաւոր եղած էր ժամանակին: Իսկ Իրանեան հնամենի և վաղնջական զրոյցներ և առասպելներ անոր հայրենիք կը ցուցնեն Ուրմիոյ լիճին եզերքները, կամ Կասպից ծովուն արևմուտքը մասնաւորաբար Ռազա քաղաքը և անոր ձառը ջրվանդները իմասնաւորի Չպառ լիւնը, ուր կ'ըսուի թէ, ան երբեմն երբեմն հոն կ'առանձնանար, աղօթքի, ծոմապահութեան և կրթանքի հետեւելով: Իսկ՝ Աւեստան, անոր հայրենիք ցոյց կուտայ Էրինա-Վէճիայն, Դարաթա գետեզերքին վրայ: Իսկ Արաբացի և մահմետական մատենագիրներէն ոմանք, Ջրադաշտին Պաղեստինից ըլլալը կը յայտնեն, առանց ուէ աղբիւր մը ցոյց տալու: Ամփոփելով վերոյիշեալ տեղեկութիւնները Ջրադաշտի մասին, հետեւեալ հաւանական եզրակացութեան կը հասնինք:

ՊԱՐՏԵԻ ՎՐԴ. ՎՐԹԱՆԷՍԵԱՆ  
(Շարունակելի՝ 12)

հաստատեց կէս-կրօնական և կէս-փիլիսոփայական ծրագրով մը: Իր աշակերտները փիլիսոփայութեան, երաժշտութեան և մարզանքի համալարփակ ուսմանց կը հետեւէին: Պիւթագորաս բանջարակերութեան կենթարկէր թէ՛ ինքզինքը և թէ՛ իր աշակերտները: Ան կը հաւատարման հոգեփոխութեան: Պիւթագորաս ինքն էր որ հնարեց թիւը իբրև սկզբունք տեղեկութեան: Ան կը ներկայանայ իրական հիմնադրել գիտութեան, երկրաչափութեան և երաժշտութեան ութնեակին: Ատեն մը, Կարմեղոս լերան վրայ առանձնացած ու մեկուսացած էր:

(3) Պատմութեան մէջ, Տրովադայի պատերազմները նշանաւոր եղած են: Յոյները երկար ժամանակ պատերազմներ մղեցին և 10 տարիներ Տրովադայ քաղաքը պաշարեցին և վերջապէս յաջողեցան զայն գրաւել: Հոմերոս իր Իլիականով և Ոդիսականով անմահացուցած է այդ անունը: Այժմ՝ քաղաքին աւերակները, Պոտուսոմի մօտ (Փոքր-Ասիա) կը տեսնուին:

(1) Պերոզ, Քաղզէացի նշանաւոր և հմուտ քուրմ մը եղած էր, որ հեղինակ կը ներկայանայ Քաղզէաստանի և Ատրեստանի մասին արժէքաւոր պատմութեան մը, որ սակայն դժբախտաբար կորսուած է, ինչ որ մատենագրական և պատմական տեսակէտներով մեծ կորուստ մըն է անտարակոյս:

(2) Պիւթագորաս (ծնած է Ն. Ք. 582-ին), Յոյն նշանաւոր փիլիսոփայ մը որ ծնած էր Սամոս կղզիին մէջ (Նգէական ծովուն մէջ), ապա՝ Իտալիոյ Կրոտոնա քաղաքին մէջ հաստատուեցաւ, շուրջ 529 ին և հոն իր անունով դպրոց մը



## ԲՆԱՆՍԻՐԱԿԱՆ

## ԱՍԱՐԴՈՆԻ ՀԱՏՈՒԱԾԱԿՈՂՄԸ

## ԵՐԿՐՈՐԴ ՍԻՒՆԱԿ

1. Նինուէ, տէրութեանս քաղաքը, խաղաղութեամբ, և 2. հօրս<sup>(25)</sup> գահին վրայ յաջող կերպով բազմեցայ: 3. Հարաւահողմը, էարի<sup>(26)</sup> հովը, կը փչէր (այս միջոցին): 4. (այդ) հովը, որուն փչումը նպաստաւոր է, թագաւորութիւն գործադրելու համար, 5. կ'ոգևորէր զիս: Նպաստաւոր (գուհական) նշաններ երկնքի մէջ և երկրի (վրայ), 6. (որ կը բացատրուի իբրեւ) տեսանողին գործը, աստուածներու և աստուածուհի(ներու) պատգամները 7. կ'աւանդորդէին զիս, շարունակաբար, վստահութիւն ներշնչելով սրտիս: 8. Մեղաւոր գունդերը, որոնք Ասորեստանի վեհապետութիւնը, 9. եղբայրներուս ապահովելու համար, չարիք մեքենայած էին, 10. անոնց բոլորը, իբրեւ մէկ (յանցաւոր) նըկատեցի, և ծանրակշիռ պատուհաս մը այցելեց իրենց: 11. (նոյնիսկ) իրենց զարմը փճացուցի: 12. Ես, Ասորդան, թագաւորը տիեզերքի, Ասորեստանի թագաւորը, 13. արու հերոսը, առաջինը բոլոր իշխաններուն, 14. Սենեքերիմի<sup>(27)</sup> որդին, տիեզերքի թագաւորը, Ասորեստանի թագաւորը, 15. Սարկոնի<sup>(28)</sup> որդին, տիեզերքի թագաւորը, նաեւ թագաւորը Ասորեստանի, 16. զաւակը Աշուրի (և) Նինուի<sup>(29)</sup> Սինի և Շամաշի սիրելին, 17. հրճուանքը Նապուի (և) Մարտուգի, սիրելին Իշթար գըշխոյն, 18. մեծ աստուածներու տենչացումը, խոհեմը, իմաստունը, 19. խելացին, ճարտարը, որ վերանորոգման համար մեծ աստուածներուն, 20. և իւրաքանչիւր քաղաքի սրբարաններուն համար 21. մեծ աստուածները բարձրացուցին զայն թագաւորութեան: Ան կ'առուցանեց Աշուրի տաճարը, 22. կանգնեց Էսակիլան<sup>(30)</sup> և Բաբելոնը, նորոգելով աստուածները և աստուածուհի(ները), 23. հոն գտնուող: Կողմուսեւ երկրներու աստուածները, Աշուր քաղաքէն, 24. վերահաստատեց ի-

րենց տեղերը, և բնակիլ տուաւ զանոնք անվրդով բնարարան մը, 25. մինչև որ սրբարանները<sup>(31)</sup> աւարտեց, և աստուածները իրենց սրբավայրերուն<sup>(32)</sup> մէջ 26. տեղաւորեց, յաւերժութեան բնակարան մը: Իրենց մեծ ձեռնտուութեամբ, 27. արեւածագէն մինչև արեւմուտք, յաղթապանծօրէն քալեցի, և 28. չունեցայ ոչ մէկ ընդդիմութիւն: Չորս ծագերու իշխանները ենթարկեցի ոտքերուս: 29. Զիս զրկեցին (հսկելու) երկիր մը, որ կը մեղանչէր Ասորեստանի դէմ: 30. Աշուր, հայրը աստուածներուն, (Ասորեստանի) հաստատումը և բազմամարդացումը, 31. Ասորեստանի սահմաններուն ընդլայնումը՝ վստահեցաւ ինծի: 32. Սին, իշխանը խոյրի, զօրութեամբ, արիւթեամբ<sup>(33)</sup>, լեցուն կուրծքով ճակատագիրս որոշեց:

## ՉՈՐՐՈՐԴ ՏԱԽՏԱԿ

33. Շամաշ, աստուածներու լոյսը, պանծալի անուան համբաւը, բարձրացուց մինչև վերին աստիճան, 34. Մարտուգ, աստուածներու թագաւորը, վեհափառութեան սարսափին շնորհիւ, սաստիկ փութորիկի մը պէս, 35. քանդեց լեռներ (և) երկիրներ: 36. Ներկալ<sup>(34)</sup>, կատաղագոյնը աստուածներուն, բարկութիւն, սարսափ, 37. և, սոսկում, պարգեւեց ինծի: 38. Իշթար, մարտի և պատերազմի բամբիշը, զօրաւոր աղեղ մը, 39. ուժգին գեղարդ մը, տուաւ ինծի իբրեւ նուէր: 40. այդ օրերուն, Նապու-զիր-գիթի-իշխի<sup>(35)</sup>, որդին Մարտուգ-արլի-իտինի<sup>(36)</sup>, կուսակալը ծովու երկրին, 41. չի պահեց դաշինքները, Ասորեստանի շահերը նկատի չառաւ: 42. մոռցաւ հօրս բարեացակամութիւնը, և վրդովելու համար Ասորեստանը, 43. հաւաքեց իր զօրքը և բանակը, և Նինկալ-իտիննան<sup>(37)</sup>, 44. Ուրի կուսակալը, իմ ենթակայ ծառան, չըջապատեց, և 45. գոցեց անոր ելքը: Աշուր, Շամաշ, Պէլ և Նապու, Նինուէի<sup>(38)</sup> իշթարը, 46. Արպէլայի Իշթարը, զիս, Ասորդոյն, յաջող կերպով հօրս գահը նըստարդոնը, յաջող (և) երկրներու իշխանութեանէն, 47. և երկրներու իշխանութիւնը ինծի վստահեցնելով, 48. չի վախացաւ, խաղաղութիւն չի տուաւ, և ոչ ալ ծառաս լքեց, 49. ոչ իր պատգամաւորը զրկեց իմ առջև, և 50. ոչ ալ, հարցուց



թագաւորութեանս որպիսութիւնը: Իր վատ արարքները, 51. Նինուէի մէջ լսեցի, և սիրտս զայրացաւ, և յուզուեցաւ հոգիս. 52. սպանեաւ, իր երկրին սահմանային վերակացուները<sup>(39)</sup>, 53. զրկեցի իր վրայ, և ան, Նապու-զիւր-գիթի-լիշիւր, 54. խոռվարար ըմբոստը, գունթերուս գնացքը լսեց, և 55. գէպի էլամ խոյս տուաւ աղուէսի պէս. քանի որ մեծ աստուածներու երգումը, 56. անտեսեց. Աշուր, Սին, Շամաշ, Պէլ և Նապու, 57. ծանրակշիռ պատուհասի մը ենթարկեցին զինքը, և էլամի մէջ, սպաննեցին զայն սուրով. 58. Նախտ-Մարտուգ<sup>(40)</sup>, իր եղբայրը, էլամի արարքը զոր գործած էին իր եղբոր գէմ, 59. երբ տեսաւ, խոյս տուաւ էլամէն, և 60. ծառայելու համար ինծի, Ասորեստան եկաւ, և 61. աղբրեց տէրութեանս. 62. ծովու երկիրը<sup>(41)</sup>, իր բոլոր տարածութեամբ, իր եղբոր ստացուածքը, իրեն վստահեցայ: 63. Իւրաքանչիւր տարի, չարունակարար, իր թանկարժէք նուէրով, 64. Նինուէ կուգար, և կը համբուրէր ոտքերս. 65. Ապտի-Միլգութին<sup>(42)</sup>, Սիդոնի<sup>(43)</sup> թագաւորը, 66. չի վախցաւ տէրութենէս. (և) չի հնազանդեցաւ շրթունքներուս հրահանգին, 67. (այլ) ապաւինեցաւ ալեկոծ ծովուն, և արհամարհեց Աշուրի լուծը. 68. Սիդոն, իր ամրակուռ քաղաքը, որ կը գտնուի ծովուն մէջտեղ, 69. փոթորիկի մը պէս հարթ հաւասար ըրի (զայն). իր պատը և իր բնակարանը քանդեցի, և 70. նետեցի ծովուն մէջ, և իր տեղւոյն վայրը աւերեցի. 71. Ապտի-Միլգութին, իր թագաւորը, գէնքեքէս, 72. փախաւ ծովուն մէջտեղը: Տիրոջս, Աշուրին հրամանով,

### Հ Ե Ն Գ Ե Ր Ո Ր Գ Տ Ա Խ Տ Ա Կ

73. ծովէն ձուկի մը նման, բռնեցի զայն, և 74. գլխատեցի զինքը. իր կինը, իր զաւակները (արու), իր աղջիկները, 75. իր պալատականները, ոսկի, արծաթ, ստացուածք, սեփականութիւն, թանկարժէք քարեր, 76. խայտաբղէտ զգեստներ, և կտաւ, փիղի<sup>(44)</sup> մորթ<sup>(45)</sup>, փղոսկր, գղքի, տոսախ, 77. ամէն ինչ, իր պալատին գանձը, մեծ քանակութեամբ կողոպտեցի. 78. իր լայնածաւալ ժողովուրդը, անհամար, 79. եղեր, ոչխարներ և էջեր մեծ քանակու-

թեամբ, 80. Ասորեստան փոխադրեցի հաւաքեցի Հիթիթի թագաւորները 81. ծովեզրա(բնակները) բոլորը. ուրիշ վայր, քաղաք մը չինեւ տուի, 82. Գար Աշուր-Ախի-Խաթինայ կոչեցի իր անունը:

### Ն Օ Թ Ե Ր

25. Գահ՝ isu kussu, աքքատացած ձեռնէ սկզբնական սում. gish gu - za խորհրդանշերուն:

26. Հով, հովի հոմանիշ մըն է. աքքա mānit բառը, Archiv für Orientforschung VI, էջ 108:

27. Սենեքերիմ, աքքատերէն Sin-ah-eriba կը կարգացուի, որ կը նշանակէ «Սին (լուսին-աստուածը) բազմապատկեց եղբայրները», որդին է և յաջորդը Սարկինի Ասորեստանի վրայ իշխեց 705-681 տարիներուն: Յիշատակուած է նաև Հին Կտակարանի մէջ, **לXX סנחרים** Σενναχρημ, Թագ. 18, 13. 19, 16. 20, 36. Եսայի 36, 1. Σαναχάριθος արտագրութեամբ կը յիշատակէ զայն Հերոդոտոս:

28. Սարկին՝ աքքատ. sharru-gi-na կը նշանակէ «հաստատէ թագաւորը», նախորդն է Սենեքերիմի. Ասորեստանի վրայ թագաւորեց 722-705 տարիներուն: Յիշատակուած է նաև Հին Կտակարանի մէջ, **לXX ארנא** Եսայի 20, 1, Պտղոմէոսի կանոնագրքին մէջ Ἀρχέανος:

29. Նինլիլ, En-lil, այսինքն Bēlի ամուսինն է:

30. Էսակիլ՝ սում. E-sag-il «բարձր գլխով տուն» Մարտուգի տաճարն է, Բաբելոնի մէջ:

31. Սրբարան՝ թարգմանութիւնն է սում. E-kur-ra «լերան տուն» խորհրդանշերուն, որոնք կը նշանակեն նաև, տաճար, սրբարան:

32. Սրբավայր՝ parakku որմէ Հին Կտակարանի **לXX פרכתא** καταπέτασμα. Ելից 26, 31. 27, 21. Դև. 4, 17. 16, 2: Parakku՝ աքքատացած ձեռնէ սկզբնական սումերական Bar խորհրդանշին:

33. Լեցուն կուրծքով՝ աքքատ. mala irti թերևս քաջութիւն, զօրութիւն կը նշանակէ. C. Bezold, Babylonisch - Assyrisches Glossar, Heidelberg, 1926, էջ 173, malu



erti "Vollsein der Brust" = (?) hohe und breite Brust, stämmigkeit:

34. Ներկային էր, դժոխքի աստուածը. սուժ. Ne-unu-gal «Մեծ քաղաքի տէրը» զաղափարանչերով կը գրուէր իր անունը. «Մեծ քաղաք» ասացուածքը դժոխքին կ'ակնարկէ: Յիշատակուած է նաև Հին կտակարանի մէջ, **ՆՂԼ** **Nḫrylos**, 2 **Թագ. 17, 30**: Արամական արձանագրուածքներու մէջ **ՆՂԼ** **ձևով**, Mes-lam-ta-è-a «ան որ Mes-lamէն կ'եկէ» կ'անուանուէր ան երբեմն: Իր տաճարն էր Mes-lamը **Kutha**ի մէջ, Ս. Գրական **ԿՈՒՄ** 2 **Թագ. 17, 30**. Կամ **ԿՈՒՄ** 2 **Թագ. 17, 24**. **LXX 4 Թագ. XVII, 24**. **Χοῦθά**. Արար. **كوتى**, այսորուան Tell-Ibrahimը: Qarradu rabu «Մեծ պատերազմող» մըն էր ան, աստուածը քանդուիւն աւերումի. մահ սերմանողը: Տրամագծորէն հակոտնեայ նկարագիր մըն ալ կը կրէր իր մէջ, իբրև բարերար, ողորմած աստուած մը: Kislimuն էր իր ամիսը, խկ տամնըչորս՝ սրբազան թիւը. բացի **Kutha**էն, կը պաշտուէր նաև **Khawilum**ի, **Assur**ի, **Larsa**ի, **Isin**ի, **Kalkhu**ի և **Suse**ի մէջ: **Eresh-ki-gal** «Մեծ երկրին իշխանուհին» էր իր ամուսինը, յն. **Ερεσχειγαλ** կամ **Ερεσχειγαλ**: Դժոխքը կը մատնանչէր, «Մեծ երկիր» ասացուածքը: **La-as** «չեն եկեր» անուամբ իշխանուհի մը նաև, կ'ընկերակցնէին իրեն երբեմն, դժոխքին կ'ակնարկէր «չեն եկեր» արտայայտութիւնը, որովհետև անվերադարձ վայր մըն էր ան. **Kutha**ի մէջ կը պաշտուէր: **M. Jastrow, RBA. 229, G. Fur-lani, RBA. 243-249, E. Dhorme, RBA. էջ 38-44**:

35. Ա.քքատ. iluNabu-zir-kitti-lishir կը նշանակէ բառացիորէն՝ Նապուշ, օրինաւոր ժառանգորդը թող բարգաւաճեցնէ: — Mitteilungen der Vorderasiatisch Aegyptischen Gesellschaft, Band 44, Die Akkadische Namengebung, J. Y. Stamm, էջ 155:

(Շարունակելի՝ 2)

36. Ա.քքատ. iluMarduk-apli-iddin կը նշանակէ բառացիորէն՝ Մարտուգ որդի մը տուաւ: **Personal Names from Cuneiform Inscriptions, A. T. Clay, New Haven, 1912, էջ 105**:

37. Ա.քքատ. iluNin-gal-idinna(na) կը նշանակէ բառացիորէն՝ նինկալ տուաւ:

38. Ա.քքատ. Ninua<sup>ki</sup>, սուժ. Nina-ն է, յոյն և լատին հեղինակներու **Ninos**, **Ninus**-ը Ս. Գրական **ՆՈՒ** **LXX Νινύης**:

39. Վերակացու՝ աքք. pahātu, սուժ. **Lú-nam** խորհրդանշէ է, Ս. Գրական **ՓՈՓՈՒ**, **LXX τοπαρχος** **Եսայի 36, 9**:

40. Ա.քքատ. Na-'id Mar-duk կը նշանակէ, նշանաւոր է Մարտուգ:

41. «Ծովու երկիր» աքքատ. bit tamtim, Վարին Քաղղէաստանի անունն է այս ըրջանին:

42. Ապտի-Միլզութի, աքքատ. Abdimilkutti, ծագումով փիւնիկեան է այս անունը՝ **עבד-מלכות** «Թագունի ծառան» **מלכות** հաւանաբար, փառաւորութեան յոգնակի մըն է, որ կը գործածուէր փիւնիկերէնի մէջ, աստուածային անուններու համար, **Revue Biblique, 1911, էջ 201**:

43. Սիզոն աքքատ. aluSi-du-un-nu, եգիպ. siduna, Հին կտակարանի **צידון** **LXX Σιδών**, այսօրուայ Սաիտան է, Միջերկրականի արևելեան ափին վրայ նաւահանգիստ մը, Տիւրոսէն երեսուն քիլոմէթր դէպի հիւսիս:

44. Ա.քքատ. píru, բաղդատել հայեւրէն փիղը, նմանապէս, սանսքրիդ. բիլու, արամ. **פיל**, ասոր. **ܦܝܠ**, արաբ. **فيل**: **Pilu**ն, սուժ. Am-si խորհրդանշերէն կը բաղկանայ:

45. Ա.քքատ. mashku, բաղդատել հայերէն մաշկը, արաբ. **مشمك**, արամ. **משכא**, եգիպտ. mshk: Maskuն սուժ. kush խորհրդանշէ:

ԱՆՈՒՇԱՆԱՆ ԱՌԴ. ԶԴՋԱՆԵԱՆ



## ՀԱՅՐԵՆԱԿԱՆ

ՆՈՒԷՐ՝ Տ. ԵՂԻՇԷ Ս. ԱՐՔ. ՏԵՐՏԵՐԵԱՆԻ (ԵՂԻՎԱՐԴ)

(ՓՈԽԱՆ ՇՆՈՐՀԱՒՈՐԱՆՔԻ)

Գ.

Ոստան — Մասմանեց ձորը

Գիշերն ինչպէս անցաւ, ո՞վ իմացաւ —  
— Երազներ, խոհներ, սէ՛ր, թո՛ղէք:  
Շա՛տ էի լսած Ոստանի նշանաւոր մըր-  
դաստաններու մասին: «Պարոնաց Այգի»-ի  
մրգաստանները: Արեւու շողերը անձրև կը  
մաղէին մրգաստանի ծառերուն վրայ, ու-  
րոնք իրենց ճիւղերը սանտրած մազերուն  
պէս՝ գոյներու գեղեցկութիւնով՝ պտուղնե-  
րով զարդարուած մինչև ծունկերը կը խո-  
նարհէին:

Մեր ետեւը մնաց «Պարոնաց Այգի» —  
Գիւղը ու հասած ենք Մատմանեց ձորը:  
Քրտուհի պարմանները՝ մատը չըթնելուն  
մեզի կը նային յափշտակուած:

Թա՛րմ ու գեղեցիկ երիտասարդներ  
էինք: Կրակուրոց կար մեր ոտքերուն տակ:  
Մարդիկ դուրս ելած էին տուներէն ու մըր-  
դաստաններէն ու մեզի կը նայէին: Նոր  
մարդիկ էինք, ոչ գիւղական տարազով:  
Երիտասարդ և անփորձ տղաք, որոնք աջ  
ու ձախ սէր ու ժպիտ ցանկելով էշերու ե-  
տեէն կը վազէին: Ու, հազիւ Մատմանեց  
ձորը մտած էինք երբ յաղթահասակ, նման  
ձորի Ընկեղունեաց, խորարմատ քիւրտ  
մը, կաղնեբազուկ, արծուային, հայկական  
մօրուքով մեր գէմը ելաւ ու մեզ բարե-  
ւեց, ու, ստիպեց որ նստինք:

Շօշրանները ազատութիւն տուին էշե-  
րուն որ իրենց ուզած խոտը ուտեն:

Քիւրտը ընտանեբար հարցուց թէ ինչ-  
պէս էր, Տօքթ. Էշըրը, ու, մեր զարման-  
քին վրայ՝ բացատրեց, թէ մեզ մեր տա-  
րազէն կը ճանչնայ, տարի մը առաջ երբ  
գործողութեան մը պատճառաւ պառկած էր  
Վանի Ամերիկեան հիւանդանոցը ու գործու-  
ղութեան ենթարկուած էր Տօքթ. Էշըրէն,  
ատկէ տեսած էր մեր դպրոցական տարազը:  
Բարեկամ մարդու հանդիպած էինք:

Ան ուղեց Տօքթ. Էշըրը պատուասիրել մեր  
միջոցով: Ակնարկի մը վրայ կ'որ ու ցած  
սեղան մը բերուեցաւ, որուն վրայ փռուե-  
ցաւ սուրբան ու հետզհետէ վրան դրուե-  
ցան գիւղական բարիքներն ու թարմ մըր-  
գերը:

Շուտով անոր երեք որդիները եկան,  
որոնք ձեռքերը կուրծքին, խոնարհութիւն  
ընկելով բարեկեցին մեզ ու նստան մեզ հետ  
սեղանի: Երեքն ալ ամուսնացած մարդիկ,  
առողջ, կաշմբուռն բազուկներով և արեգ-  
նաշող աչքերով կատարեալ տիպար քիւրտ  
ազնուական ցեղին:

Աղջիկներն ու հարսները իրար անցած  
կը վազվուտէին, մառան կը մտնէին և ու-  
նեցած բարիքները սեղանին վրայ կը լեց-  
նէին ցոյց տալու համար իրենց հարստու-  
թեան և հիւրասիրութեան չափը: Ապա,  
վախկոտ եղնիկներուն պէս ծառերուն հետ  
և անոնց ետեւը անցած մեզ կը դիտէին:

Աղջիկներէն մէկը մանաւանդ, հազիւ  
14-15 տարեկան, ես զայն միտքիս մէջ  
կոչեցի կըզէ Զարիկ, աղջիկներու ու հարս-  
ներու խումբին մէջ կը կանգնէր ինչպէս  
վարդ-արեգակը, որ ինքն իր մէջ կը վառ-  
ւէր, կը բոցկտար ու կը փթթէր: Ի՞նչ պատ-  
կեր: Դիտա՞ծ էք երբեք վառ արեգակը  
տեղեկախտ ծառերու բացուածքի մը մէ-  
ջէն, ահա կըզէ Զարիկը որ անհանգիստ,  
երբեմն, խուճըր կը ձգէր ու կը փախէր  
խտ ծառերու մէջ և անկէ բացուածքէ մը  
իր չարածճի ժպիտներով աշխարհը կը բո-  
ցավառէր:

Ուղեցինք մեր ինքնութիւնը ծածկել,  
որպէս թէ նոյն զաւառէն չըլլայինք, բայց  
շօշրանները անխոհեմ, արգէն իսկ, աջ ու  
ձախ յայտնած էին մեր ինքնութիւնը, թէ  
ո՞ր գիւղէն էինք, որոնց զաւակները և թէ  
ո՞ր մտադրութիւն ունէինք երթալ:

Հաճի Ճաֆարը, այս էր մեզ հիւրա-  
սիրողին անունը, խիստ նեղսրտած, սկսաւ



յանդիմանական շեշտով մը գանգատիւ և լսել։

— Ուրեմն, կըռօ Մըլստի Յօխիկ, Մըլստի վարդան, մեր դռնէն պիտի անցնէիք առանց մեր աղուհացին դիպչելու՞։ Է՛, ջանէ՛ք. ջանէ՛ք... տակաւին չգիտէք աշխարհի կարգն ու կանոնը։

Անասունները դադրած ուտելէ մեղի կը նայէին։ Անոնք գիտէին թէ ի՞նչ դըժուար դարձելներ կային իրենց առջևը տակաւին։

Ելանք ու շնորհակալութիւն յայտնելով մեկնեցանք։ Հաճի Ճաֆար, հրամայեց իր ամենաիրատասարդ տղուն որ մեղի ընկերանայ մինչև Մատամանեց սահմաններէն դուրս, որպէսզի Մատամանեց շները մեղ չի նեղացնեն։

Մատամանեց ձոր...։

Էտներու ամբողջ զովութիւնը իր հոսանքն առեր ջրերու թափ ու գուռնային հետ կ'երգէ բազմաձայն։ Ոստանի Կետը՝ թռչկոտելով, եզրածայտերուն հետ ծեծկրելով՝ առջ կը նետուի։ Քաղաք մեծութեամբ ընկուզենիները ջրերու այս խօլական ունակութեան վարժ՝ ծերունիի իրենց իմաստուն խոհերով կը գիտեն ջուրին վազքն ու պարը։

Այժմ, որ 40 տարուայ մը հեռաւորութենէն կը նայիմ Մատամանեց ձորին, կէս երկրագունդը կոխտնելով, կը խորհիմ անոր գեղեցկութիւնը, անոր խորհրդաւորութիւնը, զովութիւնը, ջրերու գուռաթաձայն երգը, ընկուզենիներու խոհականութիւնը, ժայռերն ու խոտերը, որոնք Աստուծոյ այդ խորանին մէջ սիրոյ խաղը կը սրսփային, սիրտս կը ճմլուի, կը դառնանայ, ցօւրտ մշուշի մը մէջ կ'իյնայ հոգիս, ինքն իր վրայ կը կծկուի և ինքն իրեն կը հարցնէ. —

Ինչո՞ւ, ինչո՞ւ, ինչո՞ւ...։

Ո՞վ անարդարութեան և անիրաւութեան ձմեռ՝ ե՞րբ արգարութեան արեգակը ծագի պիտի ու գուն ապրիս գարնան քու գեղեցիկ օրերը։

Եւերը՝ իրենց պոչերը շարժելով կը քայեն պարտականութեան խոր գիտակցութիւնով։ Մենք՝ գրեթէ վաղելով հազիւ անոնց կը հասնինք։ Մեզմէ իւրաքանչիւրը իր երազն ունի, չենք խօսիք ու չենք կատակեր, մեր միտքին աչքերը՝ փոխան բռնութեանը մեր սիրտի ներքնաշխարհին դարձած են։

Իմ երազ աշխարհը, կըզէ Զարիկն է։ Խոհերուս հորիզոնին վերև անոր արեգակն է բարձրացեր, տա՛ք է ան ու կը խաչէ ինձ, քրտինք կը քամէ, գլուխս կ'այլի, բերանս չորցած է, պա՛ղ ջուրի պէտք ունիմ որ կրակներս մարէ, զովութիւն տայ։

Կշտամբանք մը հոգիիս խորերէն գլուխը կը բարձրացնէ. — հեթանո՛ս։ Ուխտաւորին խորհուրդները տեղի տուած են հեթանոսական զգացումներուն առջև, փոխան եղիշէի՝ Զարիկին հետ կը բարձրանամ. փոխան Խորենացիի մատենան՝ Զարիկը գրկած կը բարձրանամ. փոխան Նարեկացիի և անոր սրբալոյս աղօթքներու շունչին՝ «ես ինձ համար շինած եմ անել արգելաւորան և անփախչելի որոգայթ մը. իմ սիրտին մէջ տնկած եմ, դառնաճիւղ տունկ մը, անառակ վարքի գարշութիւնը ծաղկեցնող, ապականաբեր և մահաոթի ողկոյններ արտադրող բարունակ մը՝ կորուստի գիւնին երկնող»։

Ու, հոգիէս աղաղակ մը կը բարձրանայ։

— «Քու ստեղծածդ եմ, թող բանսարկուին հնարած մեղքին հարուածը բոլորովին չի կորսնցնէ ինձ, ո՞վ բարեխնամ Տէր»։

Բայց՝ «աղօթացս միջոցին կենցաղական մտաղբաղումներով՝ կրկին կը գրաւուիմ ու միտքիս երիվարը՝ բանականութիւնս երասանակով՝ կրկին ինձ ոտքի կը հանէ ու Բէլիարէն լեզուով կը փաստաբանէ։

— «Վասնզի, ո՞վ առաւօտին հասնելով, լոյսին ծագած պահուն կը վախնայ թէ մութ պիտի ըլլայ։ Ո՞վ կեանքին մօտիկ եղած վայրկեանին՝ մահէն կ'երկնչի։ Ո՞վ ազատութիւնը ողջունած ըրպէին կը խորհի թէ յանցաւոր պիտի ըլլայ...։

Ո՞վ հացի յաճախութեան ատեն՝ անօթեանալու, գետերու հոսանքին առջև՝ ծաղաւելու, ու, Սիրոյ խնամաստ գութին առջև՝ չարչարուելու զգացումը կրնայ ունենալ»։

Բէլիարին առջևը «կը կտրէ Նարեկացին ու մուրճի սաստկութեամբ կը հարուածէ միտքիս խոհերը. —

— «Ո՞վ դու զազրելի գոյներով աղտոտած ու մրճոտած արարած. վասնզի նոյն բանն է ծառայել կուռքի ու մեղքի կիրքերուն...։



Բայց, ես մարդ եմ, «խօսուն ձի» մըն եմ, կարծրերախ, սանձակոտոր ու կիրքերու մէջ երասանարձակ. անհրապոյր յովտակ մըն եմ վայրենի և անկիրթ, մոլեգնած, տարագիր ու կորստական մարդ, որուն ամբողջ յօրինուածքը մահաոխիթ կիրքերով է չաղախուած, որովհետեւ, սիրտիս զգացողութիւնը Սէր — խէթովէ խոցոտուած: Անտանելի տառապանքներու տանջանքը: Միտքովս ետեւիները կը փնտռեմ ու դէմքովը՝ առաջ կը շարժուիմ, ոտքս ետ կ'երթայ... Մտամանեց ձորը:

Միտքս դժուար կուգայ յոյգերուս մըշուէն, անոնք կը մնան ձորին մէջ խտացած՝ իսկ ես Հելիվանքի բարձունքին հասած արեւ լոյսին տակ կը տեսնեմ ինքզինքս և աշխարհը:

Ե.

Երկու Հելիներ — վանքն ու գիւղը. —

Շօշրարները ժամանակ չունին դէս ու դէն տնտնայու, ժամանակ վատնելու, անոնք կը քալեն իրենց ճամբան, իսկ մենք՝ որ թէ՛ ժամանակ և եռանդ և ուժ ունինք, մէկը միւսին հետ կը մրցինք թէ ո՛վ շուտ կը մագլցի վանքին բարձունքը:

Վանք չէ եղբւր, այլ փոքր գիւղ մը, որ նստած Տրուազնի սարալանջի բարձունքին՝ Ռշտունիքի համայնապատկերը կը դիտէ, թաղուած խոտերու ու կանաչներու մէջ:

Մի քանի անգործ շուներ իրենց աղմըկարար հաչոցներով մեզ կը դիմաւորեն, իսկ գիւղացի փոքրիկները աջ ու ձախ կը վազվառնեն, լուր կը տանին տունէ տուն, — «մարդիկ եկած են, մարդիկ եկած են»:

Գիւղին աքաղաղները զի՛ւ ձայնով կը կանչեն.

— «Ինչ կա՛յ, ինչ կա՛յ, ինչ կ'ուզէ՛ք:

Շուարած ենք: Մի քանի այծեր պատի շուքին տակ նստած որոճ կը կարգան ու փրկիսոփայօրէն մօրուքնին կը շարժեն: Գիւղին աղջիկները մեզի նայելով կը կարմրին, իսկ հարսները իրենց լաջակներուն տակէն մեզի ձիկ-վիկ կ'ընեն:

Վերջապէս դուրս կուգան երիտասարդները որոնք մեզի մօտենալով կը բարեկեն և իրենց ծառայութիւնը կ'առաջարկեն. — «Ո՞վ կ'ուզէք, կամ ո՞ր կ'ուզէք երթալ բարով»:

— «Ոչինչ, դպրոցականներ ենք», կը

պատասխանենք. պտոյտի ելած ենք, կարծեցինք թէ հոս վանք մը ըլլալու է, այն տեսնելու ելանք»:

— Վա՞նք: Այո, կ'ըսեն թէ ժամանակ մը այս մեր գիւղին եկեղեցին մենաստան մըն էր, այժմ գիւղ է:

Երիտասարդները խօսելով մեզ կ'առաջնորդեն դիտելու անոր մամուլապատ քարերը, ոչինչ ունի հրապուրիչ՝ նման այն պառաւ կնոջը՝ որ ստուերէն զատ ոչինչ ունի կենսական, հրապուրիչ:

Շուք տեղ մը կ'ընտրենք ու կը նստինք քիչ մը հանգստանալու, բան մը խմելու: Մեզի կը հրամցնեն պա՛ղ թան, որ կը խմենք անյա՛գ ախորժակով: Ապա դրացի տունէն մեզի կը բերեն գիրկ մը խաւարձիլ, որ կեղուեցելով թէ՛ կ'ուտենք և թէ՛ կը խօսինք:

Ձոր կ'աշխատինք մեր ինքնութիւնը ծածկել. կը ստիպեն որ խօսինք թէ

— Ո՞վ ենք, ի՞նչ ենք, ո՞ր գիւղէն, ո՞ր գերդաստանէն:

Մեզ չեն ճանչնար, բայց գիտեն, կը ճանչնան մեր գերդաստանները: Լուրը բըզ-զալով գիւղը կը լեցնէ: Անձանօթ մարդիկ ու կանայք կուգան մեզ կը ջոկջոկեն ու տաք տաք կը համբուրեն: Կը ստիպեն որ տունը մտնենք ու պատառ մը հաց կիսենք:

Հելիվանքիներուն ձեռքը խնկած ենք ինչպէս կաքաւներ, մենք կ'ուզենք ճողոպ-րիլ իսկ անոնք կ'ուզեն մեզ վանդակել: Բիւ մը կը լսենք, քիչ մը կը խնդանք և ապա մեր ոտքերը մեր կոնակը առած, թեւ առած կաքաւներու պէս կը թռչի՛նք ու կ'երթանք՝ ափսոսանքի մատնելով Հելիվանքիները:

Գիտենք, որ Հելի գիւղին մէջ զորբայ խնամիներ ունինք, որոնց տանը սեմը առանց կոխելու կարելի չէր անցնիլ ու երթալ: Բայց ո՛վ իր միտքէն կ'անցունէր թէ Հելիվանքի մէջ ալ գտնուին պիտի խոով-կան ծանօթներ ու խնամիներ:

Հելի չի մտած՝ շօշրարները մեր գալու համբաւը հասցուցած էին: Ու հազիւ գիւղին մօտեցեր էինք, արդէն իսկ, մարդիկ կը սպասէին դիմաւորելու մեզ:

Գիտենք գերդաստաններու անունները, բայց անձանօթ են մեզի մարդիկ: Ի՞նչ կարեւորութիւն ունի, մարդիկ իրենց անունովը կը ճանչցունին:

ԳՍԽԱՇՈՐԴԻ

(Շարունակելի՛ 3)

(Ն. ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ)



ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐ

ԳԱՆՁԱՍԱՐ

ՏԵՂԱԴՐԱԿԱՆ. — Այս համբաւաւոր վանքը կը գտնուի հին Հայաստանի Արցախ նահանգին Խաչեն գաւառին մէջ, Գանձասար լեռան հարաւային ստորոտը, գեղեցկադիր սարահարթի մը վրայ: Իր առջեւէն կ'անցնի Խաչեն գետակը: Եկեղեցին կառուցուած է յանուն Յովհաննու Մկրտչի, որուն զուլը կը գտնուէր անդ. — Ինճ., Ստոր. Հին Հայաստանի, էջ 314: Զաւ. Ա., Ժանպ. Ա., էջ 182: Բարխ., Արցախ, էջ 177: Թովհ., Յ. Զեռ. Խ. Վ. ի, էջ 77: Բնաշ. էջ 462:

ՊԱՏՄԱԿԱՆ. — Գանձասարի վանքը առաջին անգամ կը յիշուի Սիւնեաց պատմիչէն Ժ. դարու կիսուն: ԺԲ. դարու կիսուն հոս կը թաղուի Գրիգոր Իշխան, որդի վասակայ, վասնզի Գանձասարը իրենց նախնեաց տապանատունն էր (Հայպ. էջ 387): Հասանայ որդի վախտանգ Իշխան խաչքար մը կը կանգնէ 1202ին (Բարխ., Արցախ, էջ 179): Զաւալ Դաւալ Հասան Իշխան, որդի վախտանգայ, և քեռորդի Զաքարէ և Իւանէ Իշխանապետներուն, ինէկ կուտայ հոյակապ եկեղեցի մը, 1216-33, որուն նաւակատիքը երկու տարի յետոյ կը կատարուի մեծ փառաւորութեամբ: Միարաններուն ապրուստին համար ան վանքին կը նուիրէ քանի մը գիւղեր (Զաւ. Ա. 182-4: Կիր. էջ 146-7): Զաւալ Իշխան, որ նահատակութեամբ կը կնքէ իր կեանքը, կը թաղուի հոս 1251ին (Կիր. էջ 229-30: Վար. էջ 152-3): Զաւալ Դաւալ և իր կինը Մամբան ձեռնարկած էին նաև ընդարձակ և վայելչադարձ գաւիթի մը շինութեան, որ կ'աւարտի 1266ին (Զաւ. Ա. 182, 186: Բարխ. էջ 174-5):

Գանձասարի առաջնորդներէն ծանօթ են հետեւեալ եպիսկոպոսները, որոնք պաշտօնավարած են ԺԳ. դարէն մինչև ԺԶ. դարու կէսը: Այդ միջոցին Աղուանից կաթողիկոսական աթոռը փոխադրուած է Գանձասար, հետեւաբար այլևս չենք հանդիպիր ուրոյն առաջնորդներու անունին:

1. — Տէր Վարդան եպիսկոպոս, 1239. — Զաւ. Ա. 184: Շահխ. Բ. 372:

2. — Տէր Յովնանէս, որդի Իւանէի, 1271-1311. — Զաւ. Ա. 189, 190, 191: Շահ. Բ. 376: Բարխ. էջ 178:

3. — Տէր Կոստանդ, 1361. — Զանգակների գնած և բերած է, մեծ Իւանէի իշխանութեան ժամանակ. — Բարխ. էջ 177-8:

4. — Մասթէոս Վարդապետ, 1407. — Շահ. Բ. 374-5:

5. — Ագաթիա եպիսկոպոս, 1441. — Թ. Մեծ Յիշտ. էջ 52:

6. — Տէր եղիա, 1443-67. — Զաւ. Ա. 185, 187, 188: Շահ. Բ. 376:

7. — Տէր Ներսէս, 1467-1500. — Զաւ. Ա. 185, 187-8: Շահ. Բ. 374, 375:

8. — Ղուկաս Վարդապետ, + 1551, որուն գերեզմանաքարը տեսած է Մ. Արք. Սմբատեանց, ծաթե գիւղի եկեղեցւոյ մէջ. — Գեղարքունի, էջ 626:

1. Սարգիս Ղալաթցի Կաթողիկոս, 1546-+ 55, որդի Հատիր Մէլիքին, նուէրների կուտայ Գանձասարի ուխտին 1546ին. — Բարխ. էջ 177: Շահ. Բ. 344:

2. — Գրիգոր Կաթողիկոս, 1556-73. — Իր հաւատքը ուրացած է 1573-ին. — Շահ. Բ. 344: Սին, 1946, էջ 231:

3. — Դաւիթ Կրդ. Արքանորցի, 1573? — Խաչենցիք Գանձասարի եկեղեցիին զանգակատունը կախելով խեղդամահ կ'ընեն. — Շահ. Բ. 344:

4. — Յովնանէս Կաթողիկոս, 1574-+ 86. — Շահ. Բ. 345:

5. — Արիսակես Կրդ. Քոլասակցի, 1588-+ 1592. — Շահ. Բ. 345: Բարխ., Աղուանից երկիր, էջ 223:

6. — Մեփիսէք Կրդ. Արաւելցի, 1593. — Շահ. Բ. 345:

7. — Սիմեոն Կրդ. Քոլասակցի, 1596. — Շահ. Բ. 345:

8. — Յովնանէս Կաթողիկոս, 1610?-1633. — Շինած է Գանձակի եկեղեցին. — Շահ. Բ. 345: Հաւանաբար իր օրով է որ երեցած է խռովարար Մելիս Բաբան. — Զաք. Ա. էջ 47:

9. — Գրիգոր Կաթողիկոս, 1634-+ 1653. — Շահ. Բ. 345:

10. — Պետրոս Կրդ. Խանգեցի, 1653-+ 1675. — Աշակերտ Ղուկաս բարունապետի: Պետրոս կթղ. և իր աշակերտը պետի: Պետրոս կթղ. և իր աշակերտը բարսեղ Արքեպոս. կը նորոգեն Սմբատի և Հերշերի վանքերը, 1661-4 թուականներուն: Իր օրով կը լուսաւորուի բոլոր



Աղուանից տունը. — Թօփ., ծ. 260. Խ.  
Վ. Ի. էջ 100 և 101: Շահ. Բ. 345: Զաք.  
Բ. էջ 68-69: Զեռ. Ս. Յ. Թ. 2273:

11. — Նրեմիա կող. Զալախանց, Գան-  
ձասարցի, 1676-+1700. — Շահ. Բ. 346:  
Բարխ. էջ 176: Սիրոն 1946 էջ 231: Արցախ  
էջ 176: — Իր օրով հակաթու էր Սիմէոն  
Զատաբերդցի (1675-1701), որուն հետ բա-  
նակցութեան մտաւ Իսրայէլ Օրի, 1699ին:

12. — Նսայի Հասան Զալախանց, Գան-  
ձասարցի (Քուլաթաղեցի). — 1702-+1728.  
— Սա ժողով կը գումարէ Գանձասարի մէջ  
և պաշտպան կը կանգնի Իսրայէլ Օրիի ծրա-  
գրին. — Շահ. Բ. 346-7: Բարխ., Ար-  
ցախ, էջ 176: Սիրոն 1946 էջ 231: Գրած է  
Աղուանից երկրին համառօտ պատմութիւ-  
նը: Իրեն ժամանակակից չըլնան Վերաբեր-  
մամբ գրածը արժէքաւոր է, բայց դժբախ-  
տաբար կիսատ ձեռք կը ներկայանայ ըստ  
տպագրին: — Երուսաղէմ, 1868 էջ 58:

13. — Ներսէս Գանձակեցի, 1729-+  
1763. — Շահ. Բ. 347: Սիրոն 1946 էջ 232:

14. Յովնանէս Գանձասարցի, Զալա-  
խանց. — 1763-+1786. — Շահ. Բ. 348:  
Բարխ. էջ 176: — Սա Իպրահիմ խանի  
կատաղի վրէժխնդրութեան զոհ կ'ըլլայ և  
անխնայ գանակոծման ենթարկուելով՝ չար-  
չարանքի տակ հոգին կ'աւանդէ: Այդ տագ-  
նապալից օրերուն Գանձասարի Վանքը կը  
կողոպտուի և քիչ մը բան միայն կը յա-  
ջողի ազատել իր եղբայրը Սարգիս Եպիս-  
կոպոս. — Սիրոն, 1946 էջ 233:

Ըստ Բարխուդարեանցի օրինակած մէկ  
արձանագրութեան, Յովնանէս Կաթողի-  
կոսի միջոցաւ, 1790ին (ՌՄԼԹ), Աբով  
Ուզբաշի և իր կենակիցը Հերիքնազ, և ի-  
րենց որդիները Մելիք Բէգլար և Մելիք  
Ապով, շինել տուած են Գանձասարի երկու  
եկեղեցիներուն տանիքները և խախտած օր-  
մերը (Արցախ, էջ 178): Նոյն արձանագրու-  
թիւնը Զալախանց Սարգիս Վարդապետ կը  
նշանակէ (ՌՃԶ) 1657 թուականով (Ճանպ.,  
Ա. էջ 192): Այդ թուականին սակայն  
Աղուանից կաթողիկոսն էր Պետրոս:

15. — Սարգիս Զալախանց, Գանձա-  
սարցի, 1794-1815-+1828. — Մինչև  
1815 կաթողիկոսական պատուով, իսկ ան-  
կէ յետոյ Մետրապոլիտ տիտղոսով պաշ-  
տօնավարած է. — Բարխ. էջ 176: Շահ.  
Բ. 348: Սիրոն 1946 էջ 234:

Բաղսասար Մետրապոլիտ, Զալախանց,  
1829-+54. — Եղբորդին էր նախորդին:  
Ան նշանաւոր բարեկարգութիւններ կը կա-  
տարէ, վանական կալուածները կ'ազատէ,  
միաբանութիւնը կը շատցնէ, գլխից կը  
բանայ, առաջնորդարան կը շինէ և հայա-  
բնակութիւնը կ'աճեցնէ. — Սիրոն, 1946 էջ  
234: Բարխ. էջ 176: — Իր օրով համա-  
շահած է Յովսէփ գիտնական Վարդապետ,  
որ 1847ին վախճանած է և թաղուած Գան-  
ձասար. — Բարխ. էջ 179:

Գանձասարի Վանքը շատ տխուր գոյ-  
ներով նկարագրուած է ԺԹ. դարու վերջին  
տասնամեակին. կալուածներուն մեծ մասը  
յափշտակուած է, չէնքին քարերը հետզ-  
հետէ կը թափին, տանիքի սալարկը խախ-  
տած է և վրան խոտերով ծածկուած, պա-  
րիսպը տեղ տեղ քանդուած է, ընտիր ձե-  
ռագիրները գողցուած են, մնացեալները  
խոնաւութեան մէջ անխնամ կը փոխն. —  
Բարխ. Արցախ էջ 180: Արարատ 1896 էջ 43:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ. — Գանձասար, հա-  
կառակ Արցախի նահանգին գլխաւոր վան-  
քերէն մին, և մօտ երեք դար ալ, 1546-  
1815, կաթողիկոսանիստ կեդրոն մը ըլլա-  
լուն, չէ փայլած որպէս մշակութային  
հաստատութիւն: Ան թէև ունէր ընդարձակ  
կալուածներ և կրնար տնտեսապէս ապա-  
հով կացութիւն մը վայելել, բայց քաղա-  
քական և եկեղեցական տաղնապետներ յա-  
ճախ յուզած են զայն և արգելք հանդի-  
սացած մշակութային լայն կեանքի մը:  
Այս պատճառաւ շատ սակաւ են անունները  
գրիչներու և գրքերու զոր պիտի կրնանք  
յիշել այստեղ:

Ա. — Աթանաս, 1576ին Գանձասարի  
Վանքին մէջ օրինակած է Սալմոս մը. —  
Կար. Թ. 1889:

Բ. — Գրիգոր Երէց, Գրիգ և Ծաղկող,  
1657ին օրինակած և ծաղկած է Խորհրդա-  
սեփ մը, Գանձասարի Պետրոս Կաթողիկո-  
սին համար. — Զեռ. Ս. Յ. Թ. 2273:

Գ. — Յովհաննէս Երէց, 1659ին օրի-  
նակած է մէկ Գերակաճուրիւն թովմայի,  
և ըն. — Կար. Թ. 2257:

Դ. — Դաւիթ Վրդ. Թիֆլիզեցի, 1760ին  
օրինակած է մէկ Աղօթագիրք Բենիկ վար-  
դապետի. — Կար. Թ. 19:

Ն. ԵՊՄ. ԾովԱԿԱՆ







րանենգ պաշտպաններու եւ մնացեր) կը պահանջէ եւ կ'ուզէ զիտնալ վանքին եկամուտներուն հաշուեցուցակը, երբ շատ լաւ գիտէ, եթէ չարութիւնը իրեն գրած չէ ըրած, թէ վանքին եկամուտներուն հարիւրին 99ը Իսրայէլի մէջ կը մնայ: Վասնզի չկայ Երուսաղէմի մէջ հայ մը որ չգիտնայ թէ Ս. Երկրի՝ աղէտէն ի վեր, հակառակ մեր բազմաթիւ դիմումներուն, չորս տարուան ընթացքին, Իսրայէլի կառավարութիւնը մեզի տուած է 2500 տինար միայն: Թէ վանքապատկան մեր կալուածներէն զանձուած մեր եկամուտները կը մնան միւս կողմը, որոնցմէ չենք կրնար օգտուիլ, քաղաքական ծանօթ կացութեան բերումով: Իսկ հին քաղաքի մեր քանի մը հատ ու կտոր կալուածներէն, տարեկան իբրեւ եկամուտ կը ստանանք շուրջ 1600 տինարի չնչին գումար մը լոկ:

Ակնարկելով տակաւին իբր թէ մեր ունեցած գաղտնի եկամուտներուն եւ մանաւանդ մեր զանոնք տնտեսել չի գիտնալուն, սեւերես Սեւումեանը կը յայտարարէ թէ վանքը ի վիճակի չէ եղած իրեն պէս կովերէ կազմուած կովտունը պահել, եւ ասիկա վարչական տկարութիւն կը նկատէ, թէ վանքի տպարանը եկամուտի մեծ աղբիւր կրնայ ըլլալ, բայց իմաստուն կերպով չի տնտեսուիր, թէ գաղտնի պահուած փոխառութիւններ եղած են եւ չեն յայտնուած, աւելին՝ թէ վանքը այլեւս պէտք չունի արտաքին օժանդակութեան եւ եղած կոչերն ու խնդրանքները դրամ կորզելու կը ծառայեն միայն:

Որքան բառ, այնքան սուտ եւ զրպարտութիւն, զոր ոչ թէ ազգային՝ այլ մարդկային ամենադոյզն զգացում ունեցող մը պիտի թոյլ չի տար ինքզինքին այս կարգի վերագրումներ ընելու Հաստատութեան մը համար, որ միշտ, եւ մանաւանդ անցնող չորս տարիներու ընթացքին, ի գործ դրաւ եւ կը դնէ այնպիսի զոհողութիւններ՝ որոնք ոսկի տառերով միայն պէտք է արծանագրուին: Աղէտի սկիզբէն ի վեր Ս. Յակոբեանց Միաբանութիւնը, իր սրբազան պետերէն սկսեալ մինչեւ յետին Միաբանը, կը շարունակեն անասան կենալ իրենց պարտականութեանց զիծերուն վրայ, հովանաւորելով, հիւրընկալելով, սփոփելով եւ անուցանելով վանքը ապաստանած եւ անոր

շուրջը եղող բովանդակ հայ հասարակութիւնը մէկ կողմէն, ու հսկելով ազգին պարծանքը եղող Սուրբ Տեղեաց իրաւանց միւս կողմէն:

Զկայ Երուսաղէմի մէջ հայ մը, եթէ հայու արիւն եւ զգացում ունի անշուշտ եւ եթէ թուրքէն աւելի թրքաբարոյ չէ, որ չգիտնայ եւ չուզէ գնահատել այս բոլորը: Թէ երեք ամիս է որ մենք պարտքով կ'ապրինք, եւ տակաւին վճարումը չենք ըրած մեր պաշտօնեաներուն, սպասելով դուրսէն ակնկալուած գումարներու:

Պարթեւ Սեւումեանները ամենադոյզն գաղափարը ունի՞ն թէ ժողովուրդին անունով Ս. Աթոռ եկած գումարները ի՞նչ չափով եւ մանաւանդ ինչ կերպերով չը բաշխուին: Թէ պատահած է երբեւիցէ որ գաղթական կամ չքաւոր հայ մը դիմած ըլլայ Ս. Աթոռոյ վարչութեան, հացի, կերակուրի, դեղի, բնակարանի եւ զանազան պէտքերու ի խնդիր, եւ մերժուած ըլլայ: Սակայն մեղքը Պարթեւ Սեւումեանի նման ապաբարոյ վիժուկներունը չէ, ամէն ժողովուրդ ունի իր անօգտագործելի տականքը եւ հետեւաբար արտաքսելի: Սակայն արտաքնոցն ալ իր մուկերը ունի, որոնք Պարթեւ Սեւումեանի նման գիտեն զգացնել իրենց գոյութիւնը: Յանցանքը անոնցն է, որ այդ մուկերը հիւրընկալելու պատիւը կ'ընեն իրենք իրենց:

Ամբողջ Եգիպտոսի հայութիւնը գիտէ թէ մեր միակ փոխառութիւնը եղած է 16 հազար ոսկի, որուն կարելոր մասը վճարուած է Ս. Աթոռէն ներս ի հաշիւ ուրիշ փոխառութիւններու եւ աւանդ գումարներու, լուսահոգի կիւրեղ պատրիարքի օրով Ս. Աթոռոյ տրամադրութեան ներքեւ դրուած զանազան ազգայիններու կողմէն: Թէ հակառակ տպարանի մէջ ի գործ դրուած աշխատանքին, կարելի չէ եղած զայն եկամուտի կարելոր աղբիւր մը դարձնել, որովհետեւ տպուած գիրքերը, մեծաւ մասամբ կրօնական եւ ազգային, դիւրութեամբ չեն վաճառուիր, շնորհիւ Պարթեւ Սեւումեաններու նման ազգապարծան մտաւորականներու, որոնք սինէմայի ու քլամներէն եւ կաշիի ու ցորենի արժեզիներէն զատ ոչինչ գիտեն կարդալ: Թող թէ վանքին տպարանը հակառակ տնտեսական այս կացութեան շատ աւելի արդիւնաւոր եղած է քան ասկէ առաջ:



Իսկ սուտերուն ամենէն անարգը այն յայտարարութիւնն է, որուն համաձայն իբր թէ Ս. Էջմիածին եպիսկոպոսացման գացող երեք վարդապետներուն համար ծախսուած է 9000 ոսկի, երբ երեքին համար եղած իրական եւ ընդհանուր ծախսը 876 ոսկի է միայն, Պէյրութի մէջ Գեր. Տ. Խորէն եպիսկոպոսի եւ Գեր. Տեղապահ Տօր միջոցաւ հանգանակուած գումարէն: Եւ տակաւին խել մը չարամիտ եւ անիմաստ ցափռտուքներ, զրաբանութիւններ եւ պահանջներ, բոլորն ալ յանուն մեր թշուառ ազգի շահերուն, որոնք սակայն բնականոն մտքի մը արտայայտութիւններ չեն թուիր ըլլալ, եւ որոնց արտաբերման ծենն ու ոգին թափանցիկ կերպով ի յայտ կը բերեն թէ՛ ինչպիսի ինկած նկարագիր մը ունի ստութեան եւ զրպարտութեան թնջուկը եղող Պարթեւ Սեւումեան կեղծանունին ներքեւ ինքզինքը վատօրէն ծածկող խրտուիլակը: Մինչեւ հոս հետեւեցանք իր ստութեանց եւ զրպարտութեանց շարքին, այժմ գանք վեր հանելու այն ոգին որ «Ազգարար»ի էջերուն մէջ փռած է իր մտղծը, հաւանաբար դժբախտ արծազանգը լինելու գելով բոլոր անոնց՝ որոնց քննադատութիւնները, Ս. Աթոռոյ նկատմամբ, տարիներէ ի վեր ամենատրտում խնդանքը կը կազմեն ամբողջովին կամաւոր ու չարամիտ սխալներու, որոնք ուրիշ բանի չեն ծառայեր բայց արծազանգը ըլլալու համար միայն այն անխիղճ զրպարտիչներուն, զուրկ մարդկային տարրական զգացումներէն, որ թուրքի մը վայել մեղսակցութեամբ նայած են միշտ ազգապարծան այս Հաստատութեան եւ անոր բոլորանուէր ծառայութեան լծուած զինուորեալ Միաբանութեանը:

Եթէ յանուն ճշմարտութեան եւ ազգին խօսող Պարթեւ Սեւումեանը կը հաւատայ իր ըսածներու ճշդութեան, ինչո՞ւ իր բո՛ւն անունով չի ներկայացներ իր զրպարտազիրը: Վասնզի կեղծանունի մը ներքեւ կը ծածկուին (այս կարգի յօդուածներու պարագային) անո՞նք միայն, որոնք կ'ամչնան իրենց գործէն: Անո՞նք միայն, որոնք մութին մէջ հարուածել կը փորձեն, նման գողերու եւ աւազակներու՝ որոնք կը վախնան լոյսէն: Տակաւին անո՞նք միայն, որոնք գիտեն թէ ճշմարտութիւնը կրնայ բռնել իրենց օծի-

քէն եւ պահանջել որ հաշիւը տան իրենց ստութեանց եւ զրպարտութեանց: Այդ հաշուետուութեան ինքզինքը արդէն իսկ անատակ ըրած է Պարթեւ Սեւումեանը, ապաստանելով կեղծ դիմակի մը ետեւ: Սակայն զայն կը պահանջենք «Ազգարար» շաբաթներէն, որ, կամ փաստերով ապացուցէ իր հիւրընկալած յօդուածին ճշմարտախօսութիւնները, եւ կամ պարկեշտ ըլլայ մեզի յայտարարելու բուն անունը զրպարտիչին՝ որ արդէն իր ըսածներուն անվաւեր ու կեղծ ըլլալը կը յայտարարէ իր ստանունին անարի լրբութեամբը:

Այս առիթով կուգնք մատնանշել պարագայ մը, թէ «Ազգարար», իր հրատարակման առաջին մէկ օրէն, մեր մամուլի Արեւակաւանն է եղած, հիւրընկալելով միշտ, մեղսապարտ եւ մեր ժողովուրդի շահերուն դէմ եւ պատուին ու արժանապատուութեան հակոտնեայ գրութիւնները: Հակառակ իր խմբագիրներու եւ տէրերու փոփոխման, Երուսաղէմի Ս. Աթոռոյ նկատմամբ իր դիրքը անբացատրելի ըսելու աստիճան եղած է ապաւարտյալ եւ չարաննգ: Գայթակղութիւններ եւ յոռի կողմեր միայն տեսնելու գելով իր տրտում եւ ցաւառիթ ախորժակները եւ հետաքրքրութիւնը վատառողջ հոգեբանութեան մը ցուցանիշը կազմած են առաջին մէկ օրէն: Ճշմարտութեան նախանձախնդրութիւնը չէ անշուշտ պատճառը իր այս կեցուածքին, այլ անհեթեթ, գռնիկ եւ անխիղճ այն զգացումը՝ որ մեղանչումն իսկ է հրապարակագրի մը ամենէն տարրական պարտականութեան: Երուսաղէմի հայոց դարաւոր Աթոռը նուիրական ու ծանր պարտականութիւններ ունենալով հանդերձ, պարտաւորութիւններ ունենալով հանդերձ, կը սպասէ առնուազն իրաւունքի, արդարութեան զգացում մը՝ մեր ժողովուրդին միտքը առաջնորդելու կանչուած մեր մամուլի ներկայացուցիչներէն: Եւ չի սպասեր որ անոնք կոյանոցի վերածած իրենց էջերը, անոր մէջ հիւրընկալելու յօժարին ամէն կարգի ցափռտուք եւ զարշանք:

Կը սպասենք «Ազգարար»ի լուսաբանութեան եւ մեր պահանջը գոհացնող յայտարարութեան՝ իր նկատմամբ գործնական քայլերու դիմելէ առաջ:

Թող թէ «Ազգարար»ներուն միջոցաւ արտայայտուած զրպարտագրերը ինքնին



գերագոյն ապահովութիւնը կուտան մեր ժողովուրդի պարկեշտ ու գիտակից դասուն, թէ բանը ինչումն է, թէ շան գլուխը ուր է թաղուած եւ թէ ինչ հաշիւներ կ'ուզեն սակարկել ու կարկանդակ այս կարգի հաշտոններուն հեղինակները:

Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Աթոռը նոր չէ որ առարկայ եղած պիտի ըլլայ Հայ ժողովուրդի սիրոյն եւ պաշտամունքին: Հայ ժողովուրդը գիտէ թէ ինչ եղած է ան անցեալի մէջ եւ ինչ կը նշանակէ իր դերը մեր կրօնական եւ ազգային արժէքներու եւ արժանապատուութեանց ի խնդիր, որուն բուն կոչումն է եղած Սուրբ Երկրի մէջ ի վաղուց անտի Հայ Եկեղեցւոյ պատկանած Սրբավայրերու եւ ազգային իրաւունքներու պահպանման գործը: Այդ նպատակին ուղղուած են բովանդակ Միաբանութեան եւ ազգին բարոյական եւ նիւթական զոհողութիւնները, մտաւորական տրգնութիւնները եւ կրթական տաժանները, անկորոյս պահելու համար Հայ Եկեղեցւոյ եւ ժողովուրդին իրաւունքները, միջազգային քրիստոնէութեան այս ոստանին մէջ, եւ անոր անունն ու պատիւը պահպանել այն բարձրութեան վրայ, ուր մեր պատուական նախնիք այնքան սքանչելի իմաստութեամբ կրցած են հանել զայն: Հայ Երուսաղէմը վանք մը եւ Միաբանութիւն մըն է որ անցեալէ մը, հոգեւոր կեանքի եւ փառքի օրերէն կուգայ, ու կը դիմէ միշտ դէպի բարձր ճակատագիր մը, առանց մեկուսացնելու ինքզինքը սակայն հանդէպ ազգի կարիքներուն: Իսկ իբրեւ ուխտավայր քրիստոնեայ Հայ սերունդներու, որոնք դարերով իրենց խունկին, արցունքին եւ լուսային հետ բերած են նաեւ իրենց հոգիներուն վիշտն ու քաղցրութիւնը, կրկնապէս հարստացնելու եւ նուիրականացնելու համար այս հոգեւոր եւ ազգային Ուխտը, Երուսաղէմի Աթոռը կը զբաւէ տեղ մը, որուն կրօնական տարածքը հոգիներու վրայ, վեր կը մնայ չափերէ եւ բաղդատութիւններէ:

Այս Աթոռը ըրած է եւ կ'ընէ իր կըրցածը, արդար է որ մարդիկ պզտիկ չի տեսնեն այդ ամէնը, թող չըսուին բաներ որոնք տեղի չեն ունեցած չարամտօրէն թելադրուած կերպարանքներու տակ: Կը բաւէ որ գտնուեցան մարդիկ որ չուզեցին զգա-

ցակից ըլլալ մեզի եւ Հաստատութեան այս աղէտին առիթով. այդպիսիներուն խղճմտանքին տազնապը իրենց պէտք է բաւէր: Անոնք լաւ կ'ընեն որ ներկուած ակնոցներով չնային այս Հաստատութեան, այլ այն պարկեշտ աչքերով, որոնցմով իրենց պապերը տեսան այս Աթոռը խռովող տազնապները: Այսքանը չէինք ուզեր ըսել, բայց ստիպուեցանք ըսելու, որովհետեւ յաւիտենական է ճշմարտութիւնը, «աչք գոն եւ ոչ տեսանեն, ականջք գոն եւ ոչ լսեն»: Բաց են մեր խօսքերը մեր հաշիւներուն պէս եւ պարզ մեր ճակատները մեր սիրտերուն նման, ով որ ըսելիք մը ունի եւ իրաւունք մը զայն ըսելու թող զայ բարով: Ս. Աթոռոյ Միաբանութիւնը իր սրտագին զոհողութիւններու եւ հերոսացումի շրջանն է որ կը բոլորէ, հինգ տարիներէ ի վեր, եւ ինքը միայն գիտէ թէ ինչ ծանրածաճ դժուարութիւններով կը շարունակուի կանգուն մնալ այս նուիրական Հաստատութիւնը, շնորհիւ եկեղեցանուէր մեր ժողովուրդի ազնիւ զաւակներուն բարերարութեանը եւ Միաբանութեան կորովին, որոնք անտարակոյս լուսաբանութեան եւ ջատագովութիւններու չեն կարօտիր:

ԽՄԲ.

Յ. Գ. — Յաջորդիւ պիտի անդրադառնանք «Ազգարար»ի դերին եւ գործունէութեան կերպին, մեր հանրային կեանքէն ներս. թէ ի՞նչ պատճառներու կը հպատակի իր ծնունդը, ի՞նչ ազդեցութիւններու՝ իր ուղղութիւնը, եւ թէ մանաւանդ ինչո՞ւ այդ դժբախտ թերթուկը առաջին մէկ օրէն ստիպուեցաւ վերածուելու խողովակի մը՝ ուրկէ մարդիկ իրենց աղտողութիւնները կը հոսեցնեն լոկ:





**Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ**

**Հ Ե Ռ Ա Գ Ի Բ Ն Ե Ր**

Ս. Զատիկի տօնին առթիւ հետեւեալ շնորհաւորական հեռագիրը ստացուած է Ամենայն Հայոց վեհ. Հայրապետէն, ուղղուած Գեր. Տեղապահ Ս. Հօր:

Գեր. Տ. եղիւք Ս. Արքեպ. Տերտեան  
Տեղապահ Ս. Աթոռայ

Երուսաղէմ

«Մանուսկր գման կոյտեաց եւ յարութեամբն իւրով մեզ գկեանս պարգեւեաց»: Փրկչին Յարութեան տուրք օր, Տօնն է յաղթութեան՝ մանուան վրայ: Իմ սիրեցեալ ժողովուրդս կը սօնէ Փրկչին Սուրբ Յարութիւնը, պանծով խաղաղութիւնը, որպէսզի մարդկային կեանքը բարձրի եւ բլրայ երջանիկ: Տէր պարգեւէ աշխարհիս խաղաղութիւն որպէսզի մահը պարտօնի եւ կեանքը բլրայ ճեւական եւ երջանիկ:

Կը շնորհաւորենք Փրկչին Յարութեան տօնը եւ կ'օրհնենք մեր սիրեցեալ ժողովուրդը:

Սիրով եւ օրհնութեամբ

ԳԵՌԳ Զ.

Կարգդիկոս Ամենայն Հայոց

15 Ապրիլ 1952

Իսկ 12 Ապրիլ 1952ին, Գեր. Տեղապահ Հայրը հետեւեալ շնորհաւորական հեռագիրը ղրկած է Ամենայն Հայոց Հայրապետ վեհ. Տ. Տ. Գեորգ Զ. Սրբազնագոյն Կաթողիկոսին:

Նորին Ս. Օծաբխին Վեհ. Տ. Տ. Գեորգ Զ.

Օրբազնագոյն Կարգդիկոս Ամենայն Հայոց

Էջմիածին, Երեւան

Ի դիմաց Ս. Յակոբեանց եղբայրութեան եւ բովանդակ Միաբանութեան կը ներկայացնենք Զատիկան շնորհաւորութիւններ, մաղբելով Ձեր Օրբութեան երջանիկ երկար կեանք եւ յաջողութիւն եկեղեցւոյ, Հայրենիքի եւ սիրեցեալ ժողովուրդին:

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐԵԱՆ  
Տեղապահ Առաք. Ս. Աթոռայն Երուսաղէմի

Գեր. Տեղապահ Հայրը, զարճեալ Ս. Զատիկի տօնին առթիւ, հետեւեալ հեռագիրը ղրկած է Ս. Աթոռայն մեծ բարերար վսեմ. Գալուստ Պէյ Կիւլպէնկեանին:

Վսեմ. Գալուստ Պէյ Կիւլպէնկեան  
Լիզպոն

Եւ, ինչպէս նաեւ Ս. Յակոբեանց Միաբանութիւնն ու մեր համայնքը կը ներկայացնենք Ձեր վսեմութեան Զատիկայ առթիւ արտաբնական մաղբանքներ երկար եւ երջանիկ կեանքի մը:

Տեղապահ Ս. Աթոռայ  
ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐԵԱՆ

12 Ապրիլ 1952

Ի դիմաց Տեղապահ Հօր տօնի հեռագրին ստացուած է Վսեմ. բարերար Գալուստ Պէյ Կիւլպէնկեանէն հետեւեալ հեռագիր-պատասխանը:

Գեր. Տ. եղիւք Ս. Արքեպ. Տերտեան  
Տեղապահ Ս. Աթոռայ

Երուսաղէմ

Շատ երախտապարս եմ Ձեր աղօթքներուն եւ բանկազին բարեմաղթութիւններուն համար, ուղղուած իմ անձիս: Ուրախ եմ որ առողջութիւնն օրէ օր կը լաւանայ: Կ'ուզարկեմ Ձեզ իմ ամենամեղեղ որդիական մաղբանքներս:

Յարգանքով

ԿԻԻԼՊԷՆԿԵԱՆ

13 Ապրիլ 1952  
Լիզպոն

Ստորեւ ղրուած նամակը ստացուած է Բրիտանական Ընդհ. Հիւպատոսէն 21 Ապրիլ 1952ին:

Նորին Բարձրութիւն

Տ. եղիւք Ս. Արքեպ. Տերտեան  
Տեղապահ Հայոց Պատրիարքարանին

Երուսաղէմ

Ձերդ Բարձրութիւն

Նորին Վեհափառութիւն էլիպապէր Բ. Թագունին, որուն՝ Ձեր գնահատանքներն ու ձօնը Զ. Թագաւորին մանուան առթիւ Ձեր ցաւակցութիւններ յայտնուած են ժամանակին, հրամայած է ինձ հաղորդելու իր խորին շնորհակալութիւնը այդ գնահատմաներուն եւ զգացումի արտայայտութիւններուն համար:

Նորին Վեհափառութեան ներկայացուած էր Ձերդ Բարձրութեան կողմէ գրուած 6 Փետրուարի նամակը. Ան մասնաւոր փափաք յայտնած է որ իր երախտապարս շնորհակալիքը հաղորդելի Ձեզի եւ Ձեր համայնքի երեւելի ներկայացուցիչներուն որոնք մասնակցեցան հոգեհանգստեան արարելի պաշտամունքին:

Պատիւ ունիմ ըլլալու,

Ձեր Բարձրութեան հնազանդ ծառան

Բ. Զ. ՄՕՆԻԲԷՆԻ

Նորին Վեհափառութեան Ընդհ. Հիւպատոս

Ե Կ Ե Ղ Ե Յ Ս Ա Կ Ո Ն Գ - Բ Ե Մ Ս Ա Կ Ո Ն Գ

● Ծը. 12 Ապրիլ. — Յ. մ. Ժամը 2.45ին, Միաբանութիւնը Գեր. Տեղապահ Ս. Հօր գլխաւորութեամբ հանդիսաւոր մուտք գործեց Ս. Յարութեան Տաճարէն ներս: Տաճարի մուտքին սկսեալ «Հրաշափառ»ի զգեստաւորեալ թափօրը: Ս. Գերեզմանի ուխտէն յետոյ, Բ. Գողգոթայի մեր վերը նամատարան մէջ պաշտօնեցաւ Երեկոյեան Ժամեր-դութիւնն ու յաջորդ օրուայ տօնին մեծահանդէս նախատօնակը:

● Կիր. 13 Ապրիլ — Ծաղկապարդ. — Առաւօտեան Ժամը 6ին, Միաբանութիւնը գլխաւորութեամբ Գեր. Տ. Սաբէր Եպս. Քէմհանճեանի, Իթեմամբ Գեր. Տ. Սաբէր Եպս. Գողգոթայի վրայ՝ շաւ. Ս. Յարութեան Տաճար: Գողգոթայի վրայ՝ Միաբանութիւնը իր ուխտը կատարելէն ետք, մեր Բ. Գողգոթայի վերնամատարան մէջ պաշ-



տուեցաւ առաւօտեան ժամերգութիւն: Ժամը 8ին, Գեր. Տեղապահ Ս. Հայրը իր չքախումբով մուտք գործեց Տաճարէն ներս: Ս. Պատարագը մատոյց Հոգ. Տ. Յակոբ Վրդ. Վարդանեան: Ապա տեղի ունեցաւ օրուան մեծահանդէս թափօրը Ս. Գերեզմանին շուրջ, հանդիսապետութեամբ Գեր. Տեղապահ Ս. Հօր և մասնակցութեամբ բովանդակ Միաբանութեան և աշակերտութեան: Թափօրականք ի ձեռին ունէին լուցեալ մոմեր, ինչպէս նաև ձիթեղեղեղ և արմաւինեաց սետեր: Մեր թափօրին կը հետեւէին, իբրև մեզի հետեակ եկեղեցիներ, Ղպտիք և Ասորիք: Ժամը 12.30ին Միաբանութիւնը վերադարձաւ Մայրավանք: «Հայոց թաղ»ի մուտքին՝ թափօրը «Որ զխորհուրդ» շարականի երգեցողութեամբ յառաջացաւ դէպի պատրիարքարան, ուր Գեր. Տեղապահ Ս. Հայրը փակեց սոյն հանդիսութիւնը:

Երեկոյեան «Դոնրացէք»ի արարողութիւնը կատարուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, տպաւորիչ խորհրդաւորութեամբ, և Գեր. Տեղապահ Ս. Հօր գլխաւորութեամբ: Կատարուեցաւ Ազունիէի Ազգային թափախարութեանին ի նպաստ հանգանակութիւն: Տօնին առթիւ քարոզիչն էր Գեր. Տ. Սուրէն Եպս. որ մասնաւոր կերպով շեշտեց Ազունիէի շատ կարեւոր դերը մեր իրականութեան մէջ և քաջալերեց բարեգործական զգացումները:

● Գշ. 15 Ապրիլ — Աւագ Երեւաքի: Յիւսակ Տառն կուսանաց. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան գաւթի Ս. Յովհաննու Աւետարանչի հայապատկան մատրան մէջ: Պատարագեց Հոգ. Տ. Զաւէն Արեղայ-Չիլչիինեան:

● Եշ. 17 Ապրիլ — Աւագ Հինգաքի: Յիւսակ Ընթաց. — Առաւօտեան ժամերգութիւնէն վերջ, Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ տեղի ունեցաւ «Կարգ Ապաշխարողաց», յորմհետէ՝ հանդիսաւոր Ս. Պատարագ: Պատարագեց Գեր. Տ. Նորայր Եպս. Պողարեան: Մեծ թիւով հաւատացեալներ և բարեկրօն ուխտաւորներ ընդունեցին Ս. Հաղորդութիւն:

— Կէսօրէ վերջ, Մայր Տաճարին մէջ տեղի ունեցաւ «Ոտնուայ»ի արարողութիւնը, ներկայ էին զինուորական և կառավարական ներկայացուցիչներ և այլ բարձրաստիճան անձնաւորութիւններ:

— Ժամը 5ին տեղի ունեցաւ թափօր մը Գրիստոսի Ա. Բանտին (Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյն) մէջ, թափօրը՝ որուն կը հետեւէր հաւատացեալներու խումբը, այցելեց այն Ս. Ծառ որուն կապուելով ձաղկուեցաւ մեր Տէրը: Աւետարանի ընթերցումէն յետոյ, Հոգ. Տ. Կիւրեղ Արեղայ Գաբրիէան, քարոզեց Գրիստոսի խորհրդանշան խորհուրդին շուրջ, ու տուաւ պատմական Ս. Հրեշտակապետաց և Ս. Փրկչի վանուց:

— Գիշերուան ժամը 7.30ին սկսաւ «Խաւարման Կարգ»ը Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, տխրալից խորհրդաւորութեան մը մէջ, Գեր. Տեղապահ Ս. Հայրը հոգեւունջ քարոզ մը տուաւ:

● Ուր. 18 Ապրիլ — Աւագ Ուրբաք. — Թաղման նախատեսակը, Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, կատարուեցաւ տպաւորիչ վայելչութեամբ, նախադասութեամբ Գեր. Տեղապահ Հօր:

● Եր. 19 Ապրիլ — Աւագ Շաքաք: Ճրագայլց Ս. Զաւակի. — Առաւօտեան ժամը 9ին Ս. Յարութեան զոները բացուեցան մեր կողմէ, համաձայն իրաւական սովորութեան, ժամը 10ին Մայրավանքէն թափօրով Ս. Յարութիւն մտաւ Գեր. Տեղապահ Ս. Հայրը, և մեր վերնատան Ս. Գերեզմանին վերայ նայող պատուհանին մէջ գրաւեց իր տեղը: Մինչ այդ՝ վարը կը կատարուէր Ս. Գերեզմանի զոներուն կնքումը, և երկու վարդապետներ — հայ և յոյն — կը սպասէին զրան առջև: Բունաց թափօրէն վերջ, մեր լուսահանր՝ Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Աբրահամեան, յոյն եպիսկոպոսին հետ Ս. Գերեզման մտան և քիչ վերջ լուցեալ մամբու խորհրդէր զուրս տրուեցան Ս. Գերեզմանի քովնտի բացուած քիւրէն, և լուսակրիւնեք ձեռքէ ձեռք անցուելով՝ յանձնուեցաւ Գեր. Տեղապահ Սրբազանին, որ օրհնեց մեր վերնատան պատուհանէն վարը կրօնապէս ոգևորուած ժողովուրդը: Մեր լուսահան վարդապետը զգետաւորութեով և եպիսկոպոսական խոյր ի զլուխ անցած էր թափօրին զլուխը որ Ս. Գերեզմանին շուրջը, Յարութեան աւետիսը, «Քրիստոս յարեաւ ի մեռելոց»ը կը թնդացնէր: Լուսաւորեալի հանդէսէն վերջ Միաբանութիւնը թափօր կադմած վերադարձաւ Մայրավանք, հետը բերելով Ս. Գերեզմանէն ելած լոյսը, թափօրականք և ժողովուրդ Ս. Յակոբեանց Տաճար մտան, երգելով «Լուսաւորեալ» երուսաղէմ» շարականը:

— Ժամը 3ին կը սկսէր Ճրագայլցի ժամերգութիւնը որուն կը յաջորդէր տպաւորիչ և խորհրդաւոր իրիկնալէմի պատարագը: Պատարագեց Հոգ. Տ. Կիւրեղ Արեղայ Գաբրիէան: Ապա տեղի ունեցաւ Ս. Զատիկի նախատեսակը:

● Կիր. 20 Ապրիլ — Ս. ԶԱՍԻԿ և Տօն Աւետեաց Ս. Ասուածածնի. — Գիշերուան ժամը 1.30ին Միաբանութիւնը արթնցած է արդէն ու թափօր կադմած, գլխաւորութեամբ Գեր. Տ. Սուրէն Եպս. ի կ'իջնէ Ս. Յարութեան Տաճար:

Առաւօտեան ժամերգութիւնը մինչև «Հարց» կը պաշտուի մեր վերնատան մէջ, «Հարց»ին՝ Միաբանութիւնը զգետաւորեալ և լուցեալ մօմեղիթօք կ'իջնէ Ս. Գերեզմանին շուրջը: Ժամերգութեան անմիջապէս վերջ երկրորդ թափօր մը, հանդիսապետութեամբ Գեր. Տեղապահ Ս. Հօր կը փութայ Ս. Յարութեան Տաճար:

Հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց Գեր. Տ. Ռուբէն Արքեպս. Մանասեան, իսկ Գեր. Տեղապահ Սրբազանը խոսեցաւ կուռ և հոգեւունջ քարոզ մը Յարութեան խորհուրդին և դաշտափախին շուրջ: Յետ Ս. Պատարագի, — ուր Միաբանութիւն և ժողովուրդ մեծավայելուէ կերպով տօնած էին մեր Փրկչի հրաշափառ Յարութեան տօնը — վերադարձան Մայրավանք: Հայոց թաղի մուտքին՝ «Քրիստոս յարեաւ» շարականով ժողովուրդը Միաբանութիւն բարձրացան պատրիարքարանի ընդարձակ դահլիճը ուր Տեղապահ Սրբազանի օրհնութեամբ փակուեցաւ հանդէսը:



— Երեկոյեան Զատիկական մեծ անդաստանը կատարուեցաւ վաճառքի մեծ բաղին մէջ, ոգևորիչ հանդիսաւորութեամբ, Հանդիսապետն էր Գեր. Տեղապահ Ս. Հայրը:

● Բշ. 21 Ապրիլ — Յիւսաակ Մեռելոյ. — Յետ առաւօտեան ժամերգութեան, մեծ հանդիսութեամբ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ պատարագեց և քարոզեց Գեր. Տեղապահ Ս. Հայրը, բնաբան ունենալով «Շօշափեցէք զիս և տեսէք, զի օգի միս և ոսկերս ոչ ունի»: Իսկ երկսեռ զբաղի օգի միս և ոսկերս ոչ ունի: Իսկ Հոգ. վարդապետներ՝ սրբոց մատուցեցին թափօրը երիցս լրջան ընկէ ետք, խմբուեցաւ եկեղեցւոյ ատենակին մէջ, ուր երգուեցան «Տէր ողորմեա՛ն և ճանապարհ»ը յատկապէս ուխտաւորաց համար:

Պատարագէն ետք տեղի ունեցաւ օրուան մեծահանդէս թափօրը: Հանդիսապետութեամբ Գեր. Տեղապահ Ս. Հօր և մասնակցութեամբ բոլոր ժողովրդի Միաբանութեան, Գեր. Սրբազաններն ի մտնին ունէին խաչ և դաւադան, իսկ Հոգ. վարդապետներ՝ սրբոց մատուցեցին թափօրը երիցս լրջան ընկէ ետք, խմբուեցաւ եկեղեցւոյ ատենակին մէջ, ուր երգուեցան «Տէր ողորմեա՛ն և ճանապարհ»ը յատկապէս ուխտաւորաց համար: Ապա ժողովուրդ և Միաբանութիւն բարձրացան պատրիարքարանի դահլիճը, ուր Գեր. Տեղապահ Ս. Հայրը բոլորին ալ բաժնեց օրհնուած նշխարներ: Այսպէսով վերջ գտաւ շարժումն մը շատ փառաւոր հանդիսութիւնները, որոնց ներկայ էին ոչ միայն բարեկրօն ուխտաւորները, այլ և հաւատացեալներու խումբներով բաղմունքները:

● Եշ. 24 Ապրիլ. — Ս. Կոյսի Աւետման տօնը այս տարի զուգարկաբար ըլլալով Ս. Զատիկի հրաշփառ տօնին, Աւետման արարողութիւնները վերադասուեցան այսօրուան: Առաւօտեան ժամը Գեր. Գեր. Ս. Սուրբէն Եպս. Քեմհաճեանի ղեկաւորութեամբ, Միաբանութիւնը իջաւ Ս. Աստուածածնայ Տաճար: «Հրաշփառ»ի հանդիսաւոր մուտքէն ետք, Ս. Պատարագը մատուցեց և քարոզեց Գեր. Ս. Նորայր Եպս. Պողարեան:

● Կիր. 27 Ապրիլ — Նոր Կիւրակէ. (Յիւսաակ բիւրատը նախապէս անցըց) — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ: Պատարագեց և քարոզեց Հոգ. Ս. Հայկազուն վրդ. Աբրահամեան, անդրադառնալով մէկ միլիոն Հայ նահապետներուն ողբերգական վախճանին, տալով նաև իր պատգամը նոր սերունդին: Յաւարտ Ս. Պատարագի տեղի ունեցաւ հոգեհանգստեան հանդիսաւոր պաշտամունք, նախ Մայր Տաճարին մէջ, ապա գաւիթը, Երջանկայի շատակ Ամեն. Ս. Կիւրեղ Բ. Ս. Պատրիարք Հօր գերեզմանին վրայ, հին կրատան և Զամ-Թաղի առժամայն գերեզմանատան մէջ:

● Եր. 3 Մայիս. — Կ. Վ. ժամը 2.45-ին, Գեր. Տեղապահ Ս. Հայրը, ի գլուխ Միաբանութեան մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար: «Հրաշփառ»ի հանդիսաւոր մուտքէն և Ս. Գերեզմանի ուխտէն ետք Բ. Գողգոթայի մեր վերնամասերուն մէջ պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւնն ու յաջորդ օրուայ հանդիսաւոր նախատօնը:

● Կիր. 4 Մայիս. — Աւխարհմատարան (Կանաչ

Կիւրակէ). առաւօտեան ժամը Յին, Գեր. Ս. Նորայր Ս. Եպս. Պողարեանի ղեկաւորութեամբ Միաբանութիւնը մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար: Գողգոթայի ուխտէն ետք Բ. Գողգոթայի մեր վերնամասերուն մէջ պաշտուեցաւ առաւօտեան հանդիսաւոր ժամերգութիւնը: Կարճ դադարէ մը ետք, որուն ընթացքին կը հնչէին Տաճարին մեր ճաշու կոչնակները, մատուցուեցաւ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Քրիստոսի կենսապարգէ Գերեզմանին վրայ: Պատարագեց Գեր. Ս. Նորայր Ս. Եպս. Պողարեան, և քարոզեց բնաբան ունենալով «Աստ օրհնեցէք ամենայն ծառայք անուն Տեսա՛ն...»: անդրադառնալով հայ ազգին պանծալի իրաւանց Տնօրինական Սրբավայրերէն ներս: Յաւարտ Ս. Պատարագի կատարուեցաւ «Անդաստան» որմէ յետոյ Ս. Գերեզմանին շուրջանակի թափօրով, մեր Տեսչարանին մէջ փակուեցաւ սոյն հանդէսը: Գրեթէ կէսօրին Միաբանութիւն, ուսանողութիւն և ժողովուրդ վերադարձան Մայրավանք հանդիսաւոր գնացքով:

Պ Ա. Շ Տ Օ Ն Ս. Կ Ա Ն Բ

● Դշ. 15 Ապրիլ. — Լատինաց Զատիկ տօնին առթիւ, Գեր. Տեղապահ Ս. Հայրը, ընկերակցութեամբ Գեր. Ս. Ս. Ռուբէն, Սուրբէն և Նորայր Սրբազաններու և վարդապետ հայրերու, շնորհաւորական այցելութիւն տուաւ Ֆրանչիսկանց Կիւսթոսին, Լատինաց Պատրիարքին, Անկիլքան Եպս. Կ. Լուտերականներուն, Ապա Գեր. Ս. Սուրբէն Եպս., ընկերակցութեամբ Տիար Կարպիս Հինդլեանի, այցելեց Յոյն և Հայ-Կաթոլիկ հոգեւոր պետերուն և Մարոնիթներու Եպիսկոպոսին:

● Դշ. 16 Ապրիլ. — Ամերիկեան Բոլոնիին կողմէ եղած հրաւերի մը ընդառաջելով, ի զիմաց Գեր. Տեղապահ Ս. Հօր, Գեր. Ս. Սուրբէն Ս. Եպս. Քեմհաճեան, ընկերակցութեամբ Տիար Կ. Եպս. Գեմհաճեան, ընկերակցութեամբ թէյաթեղանի Հինդլեանի, ներկայ գտնուեցաւ թէյաթեղանի մը, տրուած ի պատիւ Տիկին Աննա Կրէյս Լինտի և Տէր և Տիկին Հօրէյշօ Վէսթըրի. ապա Սուրբէն և Տիար Հինդլեան ներկայ գտնուեցան Սրբազան և Տիար Հինդլեան ներկայ գտնուած Farewell Անուար Պէյ Նուսէյպիի կողմէ տրուած UNRWA Partyի մը Sir Alexander Gallowayի (UNRWAի ընդհանուր քարտուղի) մեկնումին առթիւ:

— Անթիլիանի միաբաններէն Հոգ. Ս. Արտակ Արդ. Մանուկեան Ս. Զատիկուայ տօնին առթիւ վերադառնալով Եպս. Քեմհաճեանի և տաղը օր փախէ յետոյ վերադարձաւ Անթիլիան:

● Բշ. 21 Ապրիլ. — Մեր Զատիկ տօնին առթիւ Պատրիարքարան այցելեցին քաղաքի Միաբանութիւնը, Նահանգային Ոստիկանապետը, Քաթարիթը, Նահանգային Ոստիկանապետը, Քաթարիթը, Ռուսաց վանքի Տեսուչը, Անկիլքան Եպս. Կ. Լուտերականներուն և Մարոնիթներու Եպս. Կ. Եպս. Կ. Լուտերականներուն:

● Դշ. 22 Ապրիլ. — Ս. Զատիկ տօնին առթիւ, առաւօտեան ժամը Գեր. Ս. Ս. Ռուբէն, Սուրբէն ընկերակցութեամբ Գեր. Ս. Ս. Ռուբէն, Սուրբէն և Նորայր Սրբազաններու և վարդապետ հայրերու, շնորհաւորական այցելութիւն տուաւ Տեսչարան Պատրիարքարանին, իսկ ժամը 10էն սկսեալ նաց Պատրիարքարանին, իսկ ժամը 10էն սկսեալ մեզի այցելութեան եկան Յունաց Պատր. Փոխա-



նորը հանդերձ Միաբանութեամբ, Ֆրանչիսկեան Կիւսթոտին փոխանորդը հանդերձ Միաբանութեամբ, Հատինաց Պատր. փոխանորդը իր հետեւորդներով, Հայ և Յոյն-Հռոմէականներու հողերը պետերը, Հապէշաց Եպիսկոպոսը, Ասորեսց Տեսուչը, Ղպտոց Եպս.ը իրենց հետեւորդներով, Անգլիական և Ամերիկեան Ընդհ. Հիւպատոսները իրենց քարտուղարներով:

● Դշ. 23 Ապրիլ. — Ի զիմաց Գեր. Տեղապահ Ս. Հօր, Գեր. Տ. Սուրէն Ս. Եպս. Քէմհանեան, ընկերակցութեամբ հոգ. վարդապետ հայերու, Զատական փոխ-այցելութիւն տուաւ Ղպտոց և Հապէշաց Եպիսկոպոսներուն և Ասորեսց Տեսչին:

● Կիր. 27 Ապրիլ. — Երեկոյեան ժամը 7ին, Ապրիլեան նահատակներու առթիւ տրուած հանդէսի մը Հ. Մ. Բ. Մ. Ի կողմէ իրենց սրահին մէջ, Գեր. Տեղապահ Ս. Հայրը նախագահեց և բանաստեղծեց:

● Ուր. 2 Մայիս. — Կ. Վ. Պօլէն Ս. Աթոռ ժամանեց օգային գծով Հոգ. Տ. Միւսոն Վրդ. Կրճիկեան:

● Շբ. 3 Մայիս. — Արաբական Զարթօնքի (Նահտա) օրուան առթիւ, ի զիմաց Տեղապահ Ս. Հօր, Աւագ Թարգման Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Աւանեան, քաղաքի Միւսթատարիֆին զբոսնեակը զնաց վասն շնորհաւորութեան:

● Բշ. 5 Մայիս. — Առաւօտուն, Գեր. Տեղապահ Ս. Հայրը, ընկերակցութեամբ Գեր. Տ. Ռուբէն Ս. Արք. Մանասեանի, վանական գործերով մեկնեցաւ Նոր Երուսաղէմ և վերադարձաւ Դշ. 7 Մայիսի Կ. Վ. ժամը 3ին:

● Կիր. 11 Մայիս. — Կ. Վ. ժամը 3ին, Գեր. Տեղապահ Ս. Հայրը, ընկերակցութեամբ Հոգ. Տ. Յայրը Վրդ. Վարդանեանի, վանական գործերով մեկնեցաւ Նոր Երուսաղէմ և վերադարձաւ Դշ. 14 Մայիսի Կ. Վ. ժամը 3ին:

● Դշ. 13 Մայիս. — Ճիշդ կէսօրին, Հոգ. Տ. Տ. Հայրիկ և Միւսոն վարդապետներ և տեղւոյն տեսուչը, ներկայ դռնուեցան Ս. Յարութեան Տաճարին մէջ ի պատիւ Կարտինալ Աղանեանի եղած ընդունելութեան:

#### ԱՅՍ ՏԱՐՈՒԱՆ ՈՒՆՏԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Այս տարի ևս Երուսաղէմ ունեցաւ իր ուխտաւորութիւնը: Եկած էին շուրջ 150 ուխտաւորներ Կ. Պօլէն, և փոքր թիւ մըն ալ մերձակայ երկրներէն:

Պէտք եղած զիւրութիւնները, թէ՛ բնակութեան և թէ՛ այլևայլ սրբավայրեր ուխտադնացութեան համար, տրուեցան լիովին: Հոգ. Տ. Հայկասեր Վրդ. Ի և հիւրընկալ Հոգ. Տ. Վարուժան Արեւիկայի առաջնորդութեամբ, այցելեցին բացի Երուսաղէմի սրբավայրերէն, Զիթնեաց լեռ, Բեթղեհէմ, Յորդանան, Երիքով, Փորձութեան լեռ և այլ վայրեր, ուր իրենց տրուեցան պէտք եղած բացատրութիւնները:

#### ԲՐՈՖ. ՕՐ. Ս. Տ. ԵՐԵՍԼԵՍԵԱՆ

24 Ապրիլ առաւօտեան, Երուսաղէմէն գեղի Բարիկ մեկնեցան, հնազանդապետ Բրոֆ. Օր. Սիրարփի և Տիկ. Արաքսի Տէր Ներսէսեան քոյրերը:

Անոնք մօտ վեց ամիսներ, Ս. Աթոռի սիրելի և յարգուած հիւրերը եղան: Բրոֆ. Օր. Սիրարփի յատկապէս եկած էր ուսումնասիրելու Ս. Աթոռոյ ձեռագրատան կարեւոր ձեռագիրները: Առայս Գեր. Տեղապահ Ս. Հօր և Ս. Աթոռոյ վարչութեան կողմէ իրեն հայթայթուեցան բոլոր զիւրութիւնները:

Բրոֆ. Օրիորդը Միաբանութեան և ուսանողութեան հետզհետէ տուաւ տասը բանաստեղծութիւններ Հայ գրչագրական և արուեստի հարցեր շօշափող:

Տէր Ներսէսեան քոյրերը վայելեցին մեր լայն համակրանքն ու յարգանքը որուն լիովին արժանի էին համեստ և սակայն մեծանուն աւխտաւորները հայ մշակոյթին:

#### ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՊԱՆՈՒԿԷԻ

ԵՒ ԱՆՁԱԽԱՂԱՅԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ

Ս. Երկրի Հապէշ Միաբանութիւնն ու ժողովուրդը հին զարեթէ հետէ վայելած է Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան խնամքն ու հովանաւորութիւնը և առ այդ Ս. Բաղաքիս և անոր յատուկ Սրբավայրերու իրաւակարգին մէջ ճանցըած է որպէս հետեւորդ (եամագ) Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան:

Վերջերս Հապէշ կայսեր բարձր կարգադրութեամբ, Երուսաղէմի Հապէշ տեսչութիւնը ունեցաւ իր Եպիսկոպոս Տեսուչը, Երանգիս Գեր. Տ. Ֆիլիփիոս Ս. Եպս. Ի:

Ս. Աթոռոյս Գեր. Տեղապահ Սրբազանը օգտուելով այս առիթէն և մանաւանդ նկատի ունենալով այն լայն բարեացակամութիւնը որ Հապէշ վեհն. կայսրը ցոյց կուտայ իր երկրի Հայ ազգի հպատակներուն, գեղեցիկ դադարաւոր ունեցաւ, Ս. Զատիկի առթիւ պարգեւատրել Հապէշաց Գեր. Տեսուչ Սրբազանը պանակելով մը, իսկ այս օրերուն Երուսաղէմ գտնուող հապէշ կայսեր պատուիրակ Հոգ. Վարդապետը, վարդապետական լանջախաչով մը:

Սոյն նուէրները 22 Ապրիլին յանձնուեցան իրենց Գեր. Տեղապահ Ս. Հօր կողմէ երբ անոնք Ս. Զատիկի շնորհաւորութեան համար եկած էին պատրիարքարան:

Գեր. Տ. Ֆիլիփիոս Եպս.ը և Հոգ. Կայս. Պատուիրակ Հայրը այս անակնկալ նուէրէն կարի զգացուած, յուզուումով և սրտառուէ խօսքերով քաջայայտեցին իրենց սէրն ու յարգանքը Հայ ժողովուրդին և մասնաւորապէս Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանին նկատմամբ և խոստացան վեհն. կայսեր մասնաւոր ուշադրութեան յանձնել այսօրուան այս դէպքը մասնաւորապէս և ընդհանրապէս մեր պատրիարքութեան բարեացակամ զիբը իրենց նկատմամբ, որպէս «ամենէն անկեղծ բարեկամներ, Հայրեր և հովանաւորներ Երուսաղէմի Հապէշ համայնքին»:



## ՅՈՐԵԼԻՆԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

COMITÉ CENTRAL DU JUBILÉ DE L'ECOLE DES DAMES TEBROTZASSERE

1, Bld. du Nord, LE RAINCY (S. &amp; O.)

1952 եւ 1953 տարիներու ընթացքին Գաղութահայութիւնը ամենուրեք պիտի տօնէ Դպրոցասէր Տիկնանց Վարժարանի 75ամեակը:

Իր կրթական գործունէութեամբ, Դպրոցասէրը անկասկած սահմանուած է կազմելու արեւմտահայ նորագոյն պատմութեան ամենէն լուսաւոր էջերէն մէկը:

«Դպրոցասէր» անունին յիշատակումն իսկ այլեւս բաւական է, որպէսզի իւրաքանչիւր Հայու մտքին ու սրտին մէջ կերտուի ան յաղթական կամարի մը խորհուրդով, ինչպէս նաեւ թելադրական բազառիկ ուժականութեամբ մը՝ պատկերացնէ իր կատարած ու այսուհետեւ ալ դեռ կատարելիք ազգանուէր առաքելութիւնը:

«Դպրոցասէր» անունը այլեւս համագոր դարձած է զրօշակի մը, որ բանուած է շքեղ փառքովը մէկէ աւելի շահուած հակառակմարտներու: Շահուած՝ ի զին գոհարներութեանց եւ նուիրումի անհաշիւ գումարի մը, զոր մատուցին «փափկասուն տիկնայք Հայոց աշխարհի», որպէսզի հայ կեանքը որոշադրող յարանորոգ պայմաններուն ընդառաջեն, արժանաւորապէս, իրենց յաջորդական սերունդները:

Ու իր հիմնարկութենէն մինչեւ առաջին համաշխարհային պատերազմը, հարիւրաւոր վարժուհիներ, Պոլսէն մինչեւ գաւառի ամենահեռաւոր անկիւններ, տրամադրուեցան առաքելութեան մը որ Դպրոցասէրէն քաղուած մտքի ու սրտի լոյսը ջամբելն էր՝ ի խնդիր արեւաշող վաղորդայններու:

Զինադադարէն յետոյ, պահելով հանդերձ Վարժուհիների բաժինը, Դպրոցասէրը իր ղեկերը լայն բացաւ թրքական եղեռնէն հրաշքով ազատած հարիւրաւոր որդուհիներու առջեւ, որոնց հետ, քանի մը տարի վերջ, Սելանիկ ու Մարսէյլ մնալէ յետոյ, 1928ին եկաւ վերջնականապէս հաստատուիլ Փարիզի մէկ արուարձանին՝ Ռէնսիի մէջ:

Այժմ քանի մը տարիէ ի վեր, իր վերանորոգուած շէնքին մէջ, Դպրոցասէրը կը շարունակէ իր առաքելութիւնը երկրորդական վարժարանի ծրագրով եւ զինշրջովի ու ցերեկեայ ԵՕ աշակերտուհիներով:

Իր 75ամեակին առիթով քանի մը ամիս առաջ հանրութեան ուղղած իր կոչը, Դպրոցասէր Տիկնանց Ընկերութիւնը կը վերջացնէր հետեւեալ յանձնառութեամբ.

«Այսպէս, Դպրոցասէրը, իր աչքերը յառած դէպի լուսապայծառ ապագան, անշէջ խանդավառութեամբ պիտի շարունակէ իր համբան՝ Հայութեան շնորհիւ եւ Հայութեան համար»:

Այս յանձնառութիւնը, որ կ'առնուի Հայութեան համար, կը դնէ այս վերջինը իր կարգին յանձնառութեան մը առջեւ: Այսինքն՝ շրջապատել Դպրոցասէրը գուրգուրոտ հոգածութեամբ ու անսակարկելի նուիրաբերութեամբ:

Որպէսզի անիկա ո՛չ միայն շարունակէ իր առաքելութիւնը, այլ նաեւ Գաղութահայութենէն ներս հետզհետէ աւելի ծաւալուն, աւելի ներուժ եւ աւելի խորարմատ դարձնէ զայն:

Եւ աւելի քան վստահ ենք որ, ինչպէս Փարիզահայութիւնը Մայիս 4ին, նոյնպէս եւ Ֆրանսայի միւս բաղադրներուն եւ բոլոր գաղութներու Հայութիւնը պիտի փութայ բերել զնահապտութեան ու յանձնառութեան այս ընծայականը յորեւի՜նական փառաշուք տօնակատարութիւններով:

Դիւան՝ Դ. Տ. Վ. ի 75 ամեակին Յորեւի՜նական Կեդր. Յանձնախումբի

Ատենադպիր  
ՊԵՏՐՈՍ ԶՍՐՈՅԵԱՆ

Ատենապետներ  
ՎՍՀԷ ՅՐԷՆԿԵԱՆ, ԱՌԱՔԵԼ ԶՍՔՐԵԱՆ  
Գանձապահ  
ՊՅՂՈՍ ՅՐԷՆԿԵԱՆ



# 1952-ի «ՍԻՈՆ» ԿԸ ՆՈՒԻՐԷ

Ծրուագիւմէն

Բար. Տիր. Վահան Սրկ. Գալֆաեան՝ Անթիլիասի Դպրեկանուց :

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Քանի մը ամիս առաջ խաղաղութեան Համաշխարհային խորհուրդը կոչ ուղղեց բոլոր երկիրներու ժողովուրդներուն, 1952-ին արժանաւորապէս տօնելու համար

ԻՊՆ ՍԻՆՍՅԻ 1000 ամեայ

ՆԻՔՈԼԱ Վ. ԿՈԿՈԼԻ 100 ամեայ

ԼԷՈՆԱՐՏՈ ՏԱ ՎԻՆՉԻԻ 500 ամեայ

ՎԻՔԹՈՐ ՀԻԻԿՈՅԻ 150 ամեայ յորեկեանները :

Ռւրախութեամբ կ'ողջունենք այս որոշումը, որովհետեւ համազուած ենք որ մշակութային այս հանդիսութիւնները պիտի ըլլան առիթ մը միջազգային արժէքներու լայն ծանօթացումին, պիտի ամրացնեն ժողովուրդներու միջեւ բարեկամութիւնն ու համագործակցութիւնը. Պիտի նպաստեն մանաւանդ միջազգային խաղաղութեան ազնիւ դատին :

Այս մտադրութեամբ Պէյրութի «Գրական Շրջանակ»ը ձեռնարկած է մշակոյթի այս չորս վարպետներուն յորեկեանական տօնակատարութեան :

Վստահ ենք թէ սփիւռքի բոլոր հայրենասէր կազմակերպութիւններն ալ, իրենց կարելիութեան ներսէն չափով, պիտի ընդառաջեն խաղաղութեան Համաշխարհային խորհուրդի կոչին :

Այս առիթով կը յայտնենք մեր պատրաստակամութիւնը, նիւթերու եւ թղթակցութիւններու փոխանակութեան համար :

Ի դիմաց «Գրական Շրջանակ»ի

ԱՐՄԷՆ ԴԱՐԵԱՆ ԴԵՂԱՄ Լ. ՍԵՒԱՆ

Թղթակցութեան հասցէ.

Գ. Սեւան, նամակատու փ թիւ 1110

ՊԷՅՐՈՒԹ — ԼԻԲԱՆԱՆ

## ՄԱՄԼՈՅ ՏԱԿ Է՝

### Յ. ՕՇԱԿԱՆԻ

## ՀԱՄԱՊԱՏԿԵՐ ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

### Գ. ՀԱՏՈՐ

### ԻՐԱՊԱՇՏՆԵՐԸ

(Մոսկ, Արփիար Արփիարեան, Լեւոն Բաշալեան, Գրիգոր Զօհրապ, Հրանդ, Տիգրան Կամսարտեան, Սիպիլ, Հրանդ Ասատուր, Արեակ Զօպանեան :